Azg Ազգ

14 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2004 ԵՐԵՔՇԱԲԹԻ 224 (3155)

Թուրքիայի ներկայացուցիչները ցանկանում են մինչեւ 30 բիզնես-նախագծեր իրագործել ԼՂ-ում

Թուրքիայի ներկայացուցիչները ցանկանում են Լեռնային Ղարաբաղում իրագործել մինչեւ 30 բիզնես-նախագծեր, ինչին, սակայն, վճռականորեն խոչընդոտում է Ադրբեջանը, հաղորդում է «Մեդիամախ» գործակալությունը: Այս մասին ասել է «Ավանդույթ» ոչ կառավարական կազմակերպության ղեկավար Վալերի Բալայանը՝ ելույթ ունենալով «Պատերազմի տնտեսությունից դեպի խաղաղության տնտեսություն» գրքի շնորհանդեսին Ստեփանակերտում:

Գրքի ստեղծման նախաձեռնողներն են International Alert (Մեծ Բրիտանիա) եւ «Ավանդույթ» (ԼՂՀ) կազմակերպությունները: Այն կազմվել է International Alert-ի իրականացրած «Բիզնես եւ հակամարտություն» տարածաշրջանային նախագծի շրջանակներում: Նախագծի նպատակն է նպաստել տարածաշրջանի հակամարտությունների խաղաղ կարգավորմանը՝ փոքր եւ միջին բիզնեսի ներկայացուցիչների համագործակցության միջոցով:

Մինսկի խումբն Աստանայում Քոչարյանին եւ Ալիեւին ներկայացրե՞լ է նորացված առաջարկություն

Հայաստանի եւ Ադրբեջանի արտգործնախարարների հաջորդ հանդիպումը՝ հունվարին

ԵԱՀԿ նախարարական հանդիպման մասնակիցները ողջունել են այսպես կոչված «Պրահայի գործընթացի» ստեղծումը, «որի շրջանակներում կայացել են Հայաստանի եւ Ադրբեջանի արտգործնախարարների չորս հանդիպումներ, որոնք թույլ են տվել անցկացնել առագա կարգավորման բոլոր տեսանկյունների կրկնակի ուսումնասիրություն»: Ըստ «Մեդիամախի», այս մասին ասվում է նախորդ շաբաթ Սոֆիայում կայացած ԵԱՀԿ արտգործնախարարների խորհրդի նիստի արդյունքներով ընդունված հայտարարությունում:

«Մենք հաջալերում ենք 2004 թ. ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործում ձեռք բերված առաջխաղացումը, մասնավորապես Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահների երեք հանդիպումները, որոնք անցկացվել են Մինսկի խմբի համանախագահների աջակցությամբ», ասվում է հայտարարությունում:

«Մենք նշում ենք, որ «Պրահայի գործընթացի» հիման վրա Մինսկի խմբի համանախագահներն այս տարվա սեպտեմբերին Աստանայում Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահներին ներկայացրել են բանակցային կառուցվածքը, որը կարող է կարգավորման հիմք դառնալ... Մենք առաջարկում ենք ի գիտություն ընդունել այդ հիմքը եւ առաջ շարժվել հիմնվելով դրա վրա»:

Տես էջ 3

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17-ԻՑ ՍՈՍՍ

Ֆրանսիան Թուրքիայից պահանջելու է ճանաչել Հայոց ցեղասպանությունը

Երկուշաբթի օրը Ֆրանսիան պաշտոնապես հայտարարել է, որ Թուրքիայից պահանջելու է, որ ճանաչի 1915-23 թթ. Հայոց ցեղասպանությունը, եթե Եվրամիությունն Անկարայի հետ սկսի անդամակցության բանակցություններ, հաղորդում է Ռոյթեր գործակալությունը: «Ֆրանսիան նման հարց կդնի: Ես կարծում եմ, որ այնպիսի մեծ երկիր, ինչպիսին Թուրքիան է, պետք է այդ մասին (Հայոց ցեղասպանության-խմբ.) հիշի», մամուլի ասուլիսում հայտարարել է Ֆրանսիայի արտգործնախարար Միշել Բարնիեն:

Հայաստանը նախատեսում է երկաթուղային կապ հաստատել Իրանի հետ

Իրանի հետ երկաթուղային կապ հաստատելու՝ Հայաստանի մտադրության մասին է հայտարարել կիրակի օրը տրանսպորտի եւ կապի նախարար Անդրանիկ Մանուկյանը, հաղորդում է «Ազատությունը»: Ըստ «Ասոշիեյթեդ պրեսի», կառավարությունը մտադիր է Հայաստանի տարածքով մինչեւ Մեղրի ձգվող երկու երկաթուղիների կառուցման ծրագիր: Մանուկյանն ասել է, թե դրանցից առաջինը կարժենա 760, մյուսը՝ 900 միլիոն դոլար: Նախարարը չի նշել, թե ֆինանսապես ոչ այնքան հարուստ Հայաստանը որտեղից կարող է հայթայթել երկաթուղու կառուցման համար անհրաժեշտ գումարները: Կառավարության մի պաշտոնյա, որը չի ցանկացել նշել իր անունը, ասել է, թե նախագծի ֆինանսավորման որոշ չափն իրենց վրա կարող են վերցնել Իրանը եւ Եվրոպան:

Նրան ճանապարհեցին ծափահարություններով

ՄԵԼՈՆԵԱ ԲԱԴԱԼՅԱՆ

Չգիտես պատահականությամբ, թե խորհրդավոր օրինաչափությամբ այս վերջին տարիներին դեկտեմբերը տխուր հունձ է անում. դառնում մեր մշակույթի մեծերի կյանքի վերջին ամիսը: Այս էլ քանի տարի Նոր տարվա շեմին ընդհանրական մի մեծ վիշտ ամպի նման ծանրանում է Երեւանի երկնակամարում: Երեկ Երեւանը սգո հանդերձի մեջ էր: Հայ բեմի ու կինոարվեստի սիրելի արտիստ Խորեն Աբրահամյանին հաղթը հրաժեշտ էր տալիս լոտ ափսոսանքով:

Առնականությամբ, ուժով, բարությամբ, ավյունով առլեցուն արտիստն իր սիրելի հաղթի փողոցներով շրջեց վերջին անգամ: Երբ օպերային թատրոնի նախասրահներում հնչեց «Առաջին սիրո երգը» ֆիլմի հանրաճանաչ մեղեդին, եւ արտիստի դագաղը իջեցրին ասիճաններով, բազրիքների մոտ կանգնածները սկսեցի ծափահարել, առաջին հայացքից այնքան տարօրինակ այդ ծափողջույնները հնչեցին տխուր հեծկլտանքով:

Տես էջ 6

Իլհամ Ալիեւի անսպասելի այցը Լոնդոն

Մինչ Ադրբեջանում դեկտեմբերի 12-ին նշում էին երկրի երեք տասնամյակների ղեկավար Հեյդար Ալիեւի մահվան առաջին տարելիցը, նրա որդին՝ Իլհամ Ալիեւը, որն ԱՊՀ տարածքում առաջին ավտորիտար նախագահն է եւ, փաստորեն, գահը ժառանգեց հորից, այցելում է Մեծ Բրիտանիա: Բաքվի ANS հեռուստաընկերության թղթակիցը Լոնդոնից հաղորդում է, որ երեկ Ալիեւը հանդիպել է պատգամավորության քարտուղար Ջեֆրի Հունին: Ըստ թղթակցի, Մեծ Բրիտանիան պատրաստվում է օժանդակել Ադրբեջանին, որպեսզի վերջինս արդիականացնի իր զինուժը: Լոնդոնը խոստացել է Ադրբեջանին տրամադրել տեխնիկական օգնություն, ինչպես նաեւ կազմակերպել մարզումներ:

Նախօրեին Ադրբեջանի նախագահի վարչակազմի միջազգային հարաբերությունների բաժնի ղեկավար Նովրուզ Մամեդովն ասել էր, որ Լոնդոնում Իլհամ Ալիեւի հանդիպումների ընթացքում ուշադրության կենտրոնում կլինեն Ղարաբաղի խնդիրը եւ Ադրբեջան-Մեծ Բրիտանիա տնտեսական, քաղաքական հարաբերությունները: Մասնավորապես Ալիեւը, ինչպես նշել է Մամեդովը, իր մտահոգությունն է հայտնելու ՄԱԿում Ղարաբաղի հարցով քննարկումներում Լոնդոնի չեզոք դիրքորոշման, նաեւ՝ Քերոլայն Քոխի Լեռնային Ղարաբաղ հաճախակի այցելությունների առիթով:

Փորձագետները տարեվերջին կանխատեսում են թռչնագրիպի համաճարակ

«Գրիպի համաճարակի վտանգ այսօր հանրապետությունում չկա, բայց բոլոր պոլիկլինիկաներում պատվաստումներ են կատարվում դրա դեմ, քանի որ այն անկառավարելի ինֆեկցիա է», ասում է առողջապահության նախարար Նորայր Դավիդյանը: Երեւանում արդեն 3 հազար մարդ պատվաստվել է դրա դեմ:

Այս նախազգուշական միջոցառումը պայմանավորված է ոչ միայն անցած տարվա դասերով: Հիշենք, որ անցած դեկտեմբերի կեսերին հանրապետությունում գրիպի իսկական համաճարակ բռնկվեց:

Առողջապահության համաշխարհային կազմակերպության մասնագետները տարեվերջին կանխատեսում են գրիպի նորահայտ ու վտանգավոր տեսակի՝ թռչնագրիպի համաճարակ, որը միլիոնավոր մարդկանց մահվան պատճառ կդառնա: Այս հիվանդությունը կարող է փոխանցվել նաեւ մարդուն կրկին օդակաթիլային ճանապարհով: Առայժմ, բարեբախտաբար, Հայաստանում նույնիսկ գրիպի ավանդական տեսակների համաճարակի նախանշաններ գրեթե չեն երեւում, եթե հաշվի չառնենք, որ գրիպով հիվանդների մեծ մասը նախընտրում է բժշկի չդիմել եւ մնում է տանը:

Ընդհանրապես, անցած տարիների համեմատ նախարարն այս տարվա համաճարակաբանական վիճակը հանգիստ է համարում: Այս տարի թերեւ որոշակի տագնապների առիթ տվեց կարմրուկը, որով զարմանալիորեն հիվանդացան հիմնականում մեծահասակները: Կարմրուկով հիվանդների թիվը հասավ 1280-ի:

Այս տարի խոզուկով հիվանդացությունը նվազեց 84 տոկոսով, որովայնային տիֆը՝ 81, հեպատիտը՝ 10 տոկոսով: Չեն արձանագրվել կամ կտրուկ նվազել են դիֆտերիայի, փայտացման, պոլիոմելիթի, կատաղության դեպքերը:

Կ. Դ.

Բաքուն կրկին չի համաձայնել Ադրբեջանում ընդունել հայերի

Դեկտեմբերի 13-16-ը Թբիլիսիում եւ Երեւանում անցկացվում է ՆԱՏՕ-ի ռազմական կոմիտեի գործընկերների հետ համագործակցության հարցերով աշխատանքային խմբի ոչ պաշտոնական սեմինար, հաղորդում է «Մեդիամախ» գործակալությունը: Նախատեսվում էր, որ սեմինարն անցկացվելու է Հարավային Կովկասի բոլոր երեք պետությունների մայրաքաղաքներում, սակայն Ադրբեջանի իշխանությունները չարտահովեցին անհրաժեշտ պայմանները, մասնավորապես՝ չհամաձայնեցին Բաքվում ընդունել Հայաստանի ներկայացուցիչներին:

Թբիլիսիում եւ Երեւանում անցկացվելիք սեմինարին կմասնակցեն 34 պետությունների՝ ՆԱՏՕ-ի 23 անդամ-երկրների եւ 11 գործընկեր-երկրների ներկայացուցիչներ: Սեմինարի հիմնական թեման կլինի ՆԱՏՕ-ի Սամբուի գագաթաժողովից հետո «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագրի ռազմական չափման քննարկումը՝ ուսուցման եւ կրթության հարցերի հատուկ շեշտադրմամբ:

Եռօրյա ամրապնդումից հետո դոլարը դարձյալ արժեզրկվում է

Ամբողջ աշխարհում վառելիքի գներն իջնում են, Հայաստանում՝ ոչ

Երեք օր շարունակվող արժեւորումից հետո երեկ ամերիկյան դոլարը կրկին արժեզրկվեց եվրոյի, ճապոնական իենի նկատմամբ: Եթե ուրբաթ օրը 1 եվրոյի դիմաց վճարում էին 1.3195 դոլար, ապա երեկ, ըստ Ռոյթերի, դոլարը արժեզրկվեց 0,3 տոկոսով, կազմելով 1,3258:

Հայաստանի ֆինանսական շուկան անմիջապես արձագանքեց դրան: Եթե հանգստյան օրերին 1 դոլարի դիմաց վճարում էին մինչեւ 485 դրամ, ապա երեկ երեկոյան, լավագույն դեպքում՝ 482 դրամ, վաճառում՝ 488-ով: Ի տարբերություն դրամ-դոլար առք ու վաճառքի «լայն» մարժայի, դրամ-եվրո եւ դրամ-ռուբլի առք ու վաճառքի տարբերությունը Երեւանի փոխանակման կետերում տրամաբանության սահմաններում է: Երեկ երեկոյան 1 եվրոն գնվում էր 637, վաճառվում 640 դրամով, ռուսական 1 ռուբլին համապատասխանաբար՝ 16,9 եւ 17,0:

Երեկ իջել են նաեւ նավթի գները համաշխարհային շուկայում: Այսպես, բրենթ տեսակի վառելիքի մեկ տակառն արժեր մոտ 37 դոլար: Վերջին մի քանի ամիսներին նավթի գներն անընդհատ աճում էին՝ հասնելով 55 դոլարի: Չնայած վերջին շաբաթների կտրուկ անկմանը, Հայաստանի շուկայում գների նվազում բացարձակապես չի եղել: Սովորաբար, վառելիք ներկրող ընկերությունները արդարանում են, որ մեծ քանակությամբ «սեւ ոսկի» են ներկրել ամենաթանկ գներով եւ իրացնելուց հետո է միայն հնարավոր գների իջեցում: Նման բացատրությունն անընդունելի է ազատ շուկայի համար: Հայտնի է, որ Հայաստանի վառելիքի շուկան բոլորովին էլ ազատ չէ եւ միայն «ընտրյալները» կարող են ներգրավվել գերշահույթ ապահովող այդ ոլորտում:

«Դոլարի վարկագիծն էական ազդեցություն չի ունենա 2005 թ. բյուջեի կատարման վրա»

Կարծում է վարչապետը

Երեկ ԱԺ արտահերթ նստաշրջանում հարցադրումների առանցքը նաեւ դոլարի փոխարժեքի կտրուկ փոփոխության հետեւանքով բյուջեին սպասվող անակնկալներն էին: Հիշեցվեց, որ բյուջեում այն հաշվարկվել է դեկտեմբերի 1-ի կուրսով, այսինքն՝ 500 դրամով: Մինչդեռ այս պահին էլ դոլարն ամրանալու մեծ հույսեր չի ներշնչում: Ակնհայտ է, որ միջազգային շուկայի նոր անակնկալները դեռ առջեւում են:

ՀՀ վարչապետ **Անդրանիկ Մարգարյանն** ավելի լավատես է, քան իր ֆինանսների նախարարը, որն ընդամենը մի քանի օր առաջ մտավախություն հայտնեց, թե բյուջեի կատարումը դոլարի անկանխատեսելի վարկագծի պատճառով կարող է վտանգվել: «2004 թվականին էլ այդ փոփոխությունները եղան, բայց էական ազդեցություն չունեցան բյուջեի կատարման վրա: Ցնցած մենք տարվա վերջին ստիպված եղանք փոխհատուցել դրանք այն վարկային ռեսուրսներով, որ դոլարով էինք ստացել: Հույս ունենք, որ 2005 թվականին էլ այդ տատանումներն էական ազդեցություն չեն ունենա»:

Պարադո՞քս էր, որ հանրապետության նախագահը հանդիպեր Կենտրոնական բանկի նախագահի հետ, նոր միայն հայկական տարադրամի շուկայում կասեցվեին դոլարի աննախադեպ թռիչքները:

Վարչապետը կարծում է, որ այդ հանդիպումը չպետք է կապել դոլարի վարկագծի հետ, որ մինչ այդ էլ հանդիպումներ ու որոշակի գործողություններ են ձեռնարկվել: Ստացվում է, որ դրանց ներգործության ժամկետը համընկել է նախագահի հետ հանդիպմանը հաջորդող շաբաթին:

Նույն հարցադրմանը Կենտրոնական բանկի նախագահ Տիգրան Սարգսյանն ավելի կտրուկ պատասխան տվեց՝ «Հարցը կոռեկտ չեմ համարում»:

Ի դեմ, ֆնարկումների ժամանակ Տիգրան Սարգսյանը տեղեկացրեց, որ իրենք նոր հայեցակարգ են մշակում, որի նպատակը պիտի լինի տարադրամի փոխանակման կետերի գործունեության կանոնակարգումը: Ուսումնասիրությունները պարզել են, որ մայրաքաղաքի Տիգրան Մեծի պողոտայում եւ Կասյան փողոցում տեղավորված փոխանակման կետերն այս ընթացքում, փաստորեն սպասարկել են սվերային շրջանառությանը: Այսինքն, տարադրամի կտրուկ բարձրացումները մեզ մոտ պայմանավորված են եղել ոչ միայն միջազգային շուկայում տիրող իրադարձություններով:

2005 թվականի բյուջեի համար Անդրանիկ Մարգարյանը վրիպում է համարում սոցիալական ոլորտին ավելի նվազ գումարների տրամադրումը, քան իրենք ցանկանում են: Այնուամենայնիվ, ցանկությունների եւ հնարավորությունների այդ անհամապատասխանությունը չի խանգարում, որ վարչապետը նախորդ տարվա հետ համեմատելով՝ բավարար գնահատի նաեւ սոցիալական, առողջապահական, կրթական ոլորտներին հատկացումները: Նա ափսոսանքով նշեց միայն, որ չեն կարողացել բարձրացնել քաղաքացիական ծառայության աշխատողների աշխատավարձերը: Շեշտադրումները դրվել են այն ոլորտների վրա, որոնք վերջին տարիներին ընդհանրապես ուշադրությունից դուրս են մնացել: Դրանք են՝ բանակը, ոստիկանությունը, անվտանգության ծառայությունները:

Գալիք տարիներին հաջորդաբար կբարձրացվեն ոչ միայն ուսուցիչների, այլեւ պետական ծառայության աշխատողների աշխատավարձերը՝ հարկային, մաքսային, դիվանագիտական:

Բյուջեում Անդրանիկ Մարգարյանը սոցիալական կարեւոր ներդրում համարում է ոչ միայն ուղղակիորեն թոշակների կամ նպաստների ավելացումը, այլեւ սոցիալական ենթակառուցվածքներին ուղղված միջոցների ծավալը՝ ճանապարհաշինության, ոռոգման ու խմելու ջրի, դպրոցները համակարգիչներով ապահովելու եւ այլն: Անմիջականորեն ընդգրկված չլինելով սոցիալական խնդիրների բլոկում, դրանք, այնուամենայնիվ, աղքատության մեղմացման գործառույթ են կատարում:

Ֆինանսավարկային, բյուջետային եւ տնտեսական հարցերի հանձնաժողովի նախագահ **Գագիկ Մինասյանը** 2005 թվականի բյուջեի համար բացասական բնորոշիչ է համարում ծախսերի տոկոսային նվազեցումը պաշտպանության ոլորտում: Չնայած այս ոլորտում 7 մլրդ դրամի ավելացումներ են արձանագրվել, բյուջեի ընդհանուր ծախսերի մեջ տոկոսային առումով 2 կետով այս ոլորտին հատկացումները փոքր են: Հանձնաժողովի նախագահը, համենայն դեպս, կառավարությանը հորդորեց առաջիկա 10 օրերին վերանայել այդ դիրքորոշումը եւ ավելացնել գումարները:

2004 թվականի բյուջեի ֆնարկումները երեկ ընթանում էին խաղաղ, առանց ցնցումների որեւէ նախանշանի: Վարչապետը դա էլ բնական համարեց, քանի որ «բյուջե միանգամից չի ընդունվում, այլ նախարարություններում, գերատեսչություններում, կոալիցիայում, հանձնաժողովներում երկարատեւ ֆնարկումներից հետո», եւ երեկ ընդամենը այդ աշխատանքների վերջնական ամփոփումն էր:

Ավանդների հարցով արտահերթ նստաշրջան չի լինի

«Ոչ, չի լինի ավանդների հարցով արտահերթ նիստ, իսկ եթե ստորագրահավաք են անելու (ակնարկը վերաբերում է Հմայակ Հովհաննիսյանին, որն այս նպատակով մտադիր է ստորագրահավաք կազմակերպել), թող անեն, Հանրապետական կուսակցությունը այդ գործընթացին չի մասնակցի», այսպիսի կտրուկ վերաբերմունք արտահայտեց վարչապետն ավանդների չարչրկվող խնդրին երեկ խորհրդարանում:

ԿԱՐԻՆԵ ՂԱԼԻԵՎԱՆ

Աշխատավարձեր սահմանելիս ուսուցիչների միջեւ խտրականություն է դրվել

Հանրակրթական դպրոցների մանկավարժների աշխատավարձերի բարձրացման այնքան սպասված միջոցառումը տարօրինակ կերպով շրջանցեց երաժշտական դպրոցների, սպորտդպրոցների ուսուցիչներին ու մանկապարտեզների դաստիարակներին: Նրանք առաջվա պես սանում են նույն խղճուկ վճարները: Տարածքային կառավարման նախարար **Հովիկ Աբրահամյանը** հավաստում է, որ հարցը ֆնարկվել է կառավարությունում, եւ մինչեւ դեկտեմբերի 20-ը արդյունքները կերեւան: Համենայն դեպս, ըստ նախարարի, իրենք տրամադրված են բարձրացնելու նաեւ այս կարեւոր որոշումից դուրս մնացած ուսուցիչների աշխատավարձերը: Նշված հաստատություններն այսօր գտնվում են համայնքային ենթակայության տակ: Ֆինանսների եւ էկոնոմիկայի փոխնախարար **Պարամ Պաշտոյանը** երեկ, բյուջեի ֆնարկումների ժամանակ բացատրեց «վրիպման» պատճառը: «Կառավարությունը շուրջ 3 մլրդ դրամով ավելացրել է համայնքներին տրվող ֆինանսական միջոցները (10 մլրդ դրամը 13 մլրդ է դարձել), այսինքն, նրանց հնարավորություն է տվել լուծելու նաեւ այդ խնդիրը: Բայց կառավարությունը չի կարող պարտադրել համայնքներին, որ նրանք որոշակի, կոնկրետ աշխատավարձեր սահմանեն»: Հայաստանում 930 համայնքներ կան, եւ ոչ մի համայնքում, պարզվում է, գումարներ բաշխելիս այս խնդիրն առաջնային չեն համարել:

Գիտությանն անբավարար միջոցներ են հատկացվել

Մտավոր ներուժը մի ժամանակ արդարացիորեն համարվում էր մեր երկրի գլխավոր հարստություններից մեկը: «Արդարություն» խմբակցության անդամ **Թալալ Սանասարյանի** գնահատմամբ, պետական մտածողությունից այդ ընկալումն ասիճանաբար դուրս մղվելու վառ արտացոլքը գալիք տարում գիտությանը հատկացված ֆինանսական միջոցների ծավալն է: Ըստ պատգամավորի, գիտությանը հատկացումները առնվազն պետք է կազմեն բյուջեի 3 տոկոսը: Հիշեցնենք, որ շուրջ 6 հազար գիտնականներ ունեցող Հայաստանում գիտական ոլորտին հատկացումները կազմում են 4 մլրդ դրամ: Մասնագիտությամբ տնտեսագետ պատգամավորը կարծում է, որ առնվազն պետք է կրկնապատկվեն ՀՀ ԳԱԱ-ին հատկացված գումարները, առանձին տողով ֆինանսավորում հատկացվի Բյուրականի աստղադիտարանի, նաեւ ակադեմիկոս Գրիգոր Գյուրզադյանի լաբորատորիայի համար, այն գիտնականի, որ ավանդաբար լուրջ ներդրում է ունեցել հատուկ մաշխարհային տիեզերական հետազոտությունների մեջ եւ այսօր զրկված է այդ հնարավորությունից:

Աղեսի գոտու երրորդ կարգի վթարային շենքերն ասիճանաբար մոտենում են վթարայնության վերջին սահմանին

Սոչիսակի երկրաշարժից 16 տարի անց տնանկ ընտանիքների թիվը դեռեւս խիստ մեծ է, չնայած կառավարությունն ամեն տարի աղեսի գոտու վերականգնման մի նոր փաստաթուղթ է ընդունում: Գյուղական բնակավայրերում գործազուրկ ու տնակային կենցաղով ապրող հազարավոր մարդկանց վիճակն ապացուցում է, որ աղեսի գոտին դեռ չափազանց հեռու է զարգացման գոտի հռչակվելուց, ինչի մասին ստեղ-ստեղ հայտարարություններ են արվում պետական բարձրագույն մակարդակով:

Աղեսի գոտում այսօր, մոտավոր հաշվարկներով, շուրջ 6 հզ. ընտանիք բնակարան չունի: Սակայն այստեղ կան նաեւ վթարային շենքեր, որոնց ամրացման համար նույնպես հսկա միջոցներ են անհրաժեշտ: Ժողպատգամավոր խմբի ղեկավար **Վահրամ Բաղդասարյանի** դիտարկումներով, Վանաձորի միայն Բազում թաղամասում մի քանի տասնյակ երրորդ կարգի շենքեր կան, որոնց վիճակն օրըստօրե վատանում է: Դրանց վերականգնումը դեռեւս նախատեսված չէ բյուջեով, քանի որ կապիտալ շինարարության համար նախատեսված մոտ 1,6 մլրդ դրամը դեռ կոնկրետ հասցեականություն չունի:

Ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարար **Վարդան Խաչատրյանի** վկայաբերմամբ, կառավարությունն առաջին հերթին շտապադրումները դնում է չորրորդ կարգի շենքերի ամրացման վրա: Վանաձորի նշված թաղամասի շենքերը, սակայն, ամենայն հավանականությամբ, արդեն գալ տարի կհայտնվեն վթարայնության չորրորդ մակարդակում, եւ անկասկած, ավելի մեծ միջոցներ հարկ կլինի ծախսել:

Ասենք, որ նախագծային հաշվարկների համաձայն հանրապետության ողջ տարածքում երրորդ կարգի վթարայնությամբ շենքերի ամրացման համար անհրաժեշտ է 22 մլրդ դրամ:

«Օրինաց երկիր» խմբակցության ղեկավար **Սամվել Բալասանյանի** տվյալներով, միայն Գյումրիում դեռեւս 2600 ընտանիք ապրում է տնակներում: Ամրացման ենթակա շենքերի թիվը, որոնց մեջ նաեւ չորրորդ կարգի բազմահարկեր են, հասնում է 150-ի:

Կ. Դ.

ԱՄՍԵՌՈՒՅՍ

«Գրանդ Քենդին» 4 մետր երկարությամբ տորթ կհրամցնի տոնական արարողության մասնակիցներին

Երեկ երեկոյան Երեւանի քաղաքապետարանն սկսեց ամանորյա մայր տոնածառի պատրաստման աշխատանքները: 27 մ բարձրությամբ սյունը, որի վրա կհավաքվեն Գորիսի սոճուտներից հավաքված 1700 ճյուղեր, արդեն կանգնեցված է, 2 օրից կսկսեն զարդարել:

Հանրապետության հրապարակում հանդիսությունները կմեկնարկեն դեկտեմբերի 31-ին, ժամը 22-ին՝ տոնական համերգով:

«Գրանդ Քենդի» ընկերությունը տոնական միջոցառումներին կմասնակցի 4 մետր երկարությամբ տորթով, որը կծառայեն Ամանորը Հանրապետության հրապարակում անցկացնել նախընտրած երեւանցիները:

Մինչեւ հին Նոր տարի, մինչեւ հունվարի 13-ը համերգները կշարունակվեն, իսկ ամսի 13-ին կկատարվի տարեհացին նվիրված միջոցառումը: Ավանդույթի համաձայն տարեհացի մեջ փոքրիկ ուլունքներ կդնեն: Ում որ բաժին ընկնեն դրանք, կպարգեւատրվեն կենցաղային տեխնիկայի որեւէ միջոցով՝ հեռուստացույց, հեռախոս, փոշեկուլ եւ այլն: Ընդհանուր առմամբ, այս տարի քաղաքապետարանն իր բյուջեից 15-20 մլն դրամ է առանձնացրել նոր տարվա հանդիսությունների համար:

Այս տարի քաղաքապետարանը համայնքներին տոնածառեր չի տրամադրի, իրենք են իրենց գլխի ճարը տեսնելու: Համայնքներում ճշտվել են Վրաստանից ներկրված տոնածառերի վաճառքի մի քանի կետերը:

Մինչեւ հունվարի 14-ը քաղաքապետարանը չի միջամտի փողոցային առեւտրին

Երեւանի փոխքաղաքապետ **Արման Սահակյանը** երեկ քաղաքապետարանի նոր շենքում կայացած ճեպազրույցի ժամանակ հայտնեց, որ քաղաքապետարանը որոշել է մինչեւ հունվարի 14-ը թույլատրել փողոցային առեւտուրը: Ոստիկաններին հանձնարարվել է այս ընթացքում «բացատրական աշխատանքներ տանել» վերավաճառողների ու մանրավաճառների հետ, որ հունվարի 14-ից հետո նրանց բոլորին հեռացնելու են փողոցներից: Անկախ այս հայտարարությունից, փողոցային առուվաճառքը երբեք էլ չի ընդհատվել, եւ քաղաքապետարանի այս հերթական հիշեցում-նախազգուշացումը երեւույթի ճակատագրի համար էական ոչինչ չի նշանակելու: Թերեւս միայն, «թույլտվության» ընթացքում ոստիկաններն այնքան էլ չեն նեղի վաճառողներին:

Կ. Դ.

Երեւանի քաղաքապետարանն արժանացել է բացասական մրցանակի

Տեղեկատվության ազատության քաղաքացիական նախաձեռնություն կազմակերպությունը հայտարարել է 2004 թվականի «Տեղեկատվության ազատություն» մրցանակակիրների անունները:

Տեղեկատվություն ապահովող լավագույն համակարգ ունեցող հիմնարկություն է ճանաչվել Ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարությունը: Վանաձորի «Հելսինկյան քաղաքացիական ասամբլեա» հասարակական կազմակերպությունը մրցանակի է արժանացել տեղեկատվություն ստանալու իրավունքին աջակցելու համար:

Տեղեկատվության ազատության խնդիրներն ակտիվորեն լուսաբանող լրագրող է ճանաչվել Նարիա Բուլղադարյանը:

Ուշագրավ է, որ Երեւանի քաղաքապետարանին տրվել է բացասական մրցանակ՝ տեղեկատվության ազատության օրենքի պահանջները չկատարելու, մասնավորապես հետաքննող լրագրողներին տեղեկատվություն չտրամադրելու համար: Քաղաքապետարանին իբրեւ մրցանակ կհանձնվի կողպեք, որը համարվում է գաղտնապահության խորհրդանիշ:

Ի դեմ, վերջին մրցանակն անցյալ տարի չէր սահմանվել, քանի որ տեղեկատվության ազատության օրենքը նոր էր ընդունվել:

Ռ. Պ.

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության 69 տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 375010 Հանրապետության 47
Ֆաքս 374 1 562863
e-mail: azg2@arminco.com
www.azg.am
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՎԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ. 529221
Լրագրողների սենյակ / հեռ. 581841
Հանձնարարություններ / հեռ. 582483
Շուրջօրյա լրահավաք ծառայություն / հեռ. 529353
Հանձնարարագրային շարուածք «Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տրպագիր մամուլի միջոցով կամ ռադիոհեռուստատեսութեամբ առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

ԱԶԳ

Մասնավորեցում

ՏԵՂԵԿԱՑՆՈՒՄ Է ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆԸ

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ «ԱՃՈՒՐԴԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ՀՐԱՎԻՐՈՒՄ Է ԱՃՈՒՐԴԻ, ՈՐԸ ՏԵՂԻ ԿՈՒՆԵՆԱ 2005 Թ. ՀՈՒՆՎԱՐԻ 12-ԻՆ, ԺԱՄԸ 12:00-ԻՆ, «ԱՃՈՒՐԴԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ, ՀԱՍՑԵՆ՝ Ք. ԵՐԵՎԱՆ, ՀՐ. ՔՈՉԱՐԻ 27:

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

ՀՀ կառավարության 17.10.02թ. N1833-Ա որոշմամբ լուծարվող «Գյումրիի էլեկտրոն» ԴՋ-ի (հասցեն՝ Շիրակի մարզ, ք. Գյումրի, Գործարանային 5) հաշվեկշռում գտնվող գույքը

N	Գույքի անվանումը	Շահագ. տարեթիվ	Քանակ	Մաշվ. %-ը	Մեկնարկ. գինը (նեռարյալ ԱԱՀ-ն) դրամ	Նվազագ. գինը (նեռարյալ ԱԱՀ-ն) դրամ	N	Գույքի անվանումը	Շահագ. տարեթիվ	Քանակ	Մաշվ. %-ը	Մեկնարկ. գինը (նեռարյալ ԱԱՀ-ն) դրամ	Նվազագ. գինը (նեռարյալ ԱԱՀ-ն) դրամ
1	Հաստոց 3Դ641Ե	1988	1	75	113020	56510	20	Տրանս ՏԷՍ 349/175 4x8x25	1986	1	100	4880	2440
2	Հաստոց ծաղկի սրման	1988	1	75	147795	73898	21	Վառ. ՀՍՍՄ 34x8x24	1989	1	100	18345	9173
3	Հղկող հաստոց 5Կ822Վ	1988	1	75	368380	184190	22	Հոր հղկող հաստոց	1988	1	100	20170	10085
4	Ցորացման վառարան ԴՌ	1987	1	100	18830	9415	23	Վառ. սնամ32.6.2.5	1989	1	100	56855	28428
5	Հաստոց 1Ի14ՕՊ	1988	1	75	364480	182240	24	Ուղղող կծող ապ. Ա6Լ9	1990	1	87	88725	44363
6	Դոցենստր ԿԱՍ 44612	1988	1	100	61325	30663	25	Խառնաս. հաստ. 16405Ա	1988	1	94	134130	67065
7	Փոշեծծիչ ՕԻԼ 900	1987	1	100	8215	4108	26	Գեներատոր	1986	1	100	3245	1623
8	Դոզավորի մեք. ՕԿԱ-4401	1987	3	100	15245	7623	27	ՊՍԱՍ պատմ. Ֆ566	1986	1	100	33230	16615
9	Լիցքավորման կայան 03ՍԱ	1988	1	75	11410	5705	28	Լուսադիոտ. հաստ. Կ3Ա47-3	1986	1	100	24970	12485
10	Սարք Ա3 449004	1989	1	100	59500	29750	29	ԷՈԿ ԷՐ 420	1986	1	100	24780	12390
11	Սարք ՊՍԱԿՈԿ 25/	1988	1	100	16655	8328	30	Թիթեղային Լ-25-30	1986	1	100	3170	1585
12	Սարք Խրատալ 70/	1988	1	100	44585	22293	31	Վոլտմետր Բ3-38	1985	1	100	17010	8505
13	Սարք Ս2339-003	1987	1	100	73675	36838	32	Էլ. դիսպետչեր Ե7Ա90	1990	1	100	3940	1970
14	Լիցքավորման սարք 93Ս-150	1988	1	75	10845	5423	33	Ցորաց. վառ.	1989	2	100	116500	58250
15	Գնդային աղաց	1991	3	100	272600	136300	34	Փայտամշակման հաստ.	1989	1	100	76255	38128
16	Օսցելոգրաֆ ՈՒ1-55	1987	2	100	11525	5763	35	ապ. հաստ. ՀԼ 118-1	1987	1	100	50900	25450
17	Օսցելոգրաֆ ՈՒ1-99	1986	1	100	17596	8798	36	Ուղղող կոր. մեք. 413-2114-00	1980	1	100	219840	109920
18	Սնուցման բլոկ Բ5-49	1986	2	100	10106	5053	37	Շոգեկաթսա ՊԿԼ-2Ե	1987	2	100	96040	48020
19	Ցորացման վառարան ԴԼՊՏ	1989	1	100	56375	28188							

Աճուրդը կանցկացվի հոլանդական (գնի նվազեցման) եղանակով:

Աճուրդին կարող են մասնակցել ֆիզիկական և իրավաբանական անձինք, ինչպես նաև հանձնմունքները, որոնք մինչև 2005թ. հունվարի 12-ը, ժամը 11:30 աճուրդային հանձնաժողովին են ներկայացրել.

-աճուրդի նախավճարի մուծման անդորրագիրը, որի չափն է 1585 դրամ, մուտագրման հաշիվն է Հայինայբանկի թիվ 160006651014 դրամային հաշիվը: Նախավճարը կարող է վճարվել նաև կանխիկ «Աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ-ի դրամարկղ.

-անձնագիրը, իսկ իրավաբանական անձինք հիմնադիր փաստաթղթերի պատճենները և լիազորությունները հաստատող փաստաթղթերը:

Աճուրդին չեն կարող մասնակցել այն անձինք, որոնք վաճառվող լոտի նկատմամբ չեն կարող ունենալ սեփականության իրավունք:

Վերը նշված փաստաթղթերի առկայության դեպքում աճուրդային հանձնաժողովը մասնակցին տրամադրում է մասնակցի վկայական:

Աճուրդին կարող են ներկա գտնվել դիտորներ՝ աճուրդի մասնակից չհանդիսացող այն անձինք, ովքեր վճարել են մուտքի վճար՝ 3000 դրամ:

Աճուրդի մասնակցի վկայականները տրամադրվում են «Աճուրդի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունում (հասցեն՝ ք.Երևան Հրազդան Քոչարի 27) մինչև 2005թ. հունվարի 12-ը, ժամը 11:30, իսկ դիտորի տոմսերը վաճառվում են ընդհուպ մինչև աճուրդի սկսվելը:

Աճուրդին մասնակցել ցանկացողները վաճառվող լոտ(եր)ին (գույքին) կարող են ծանոթանալ սույն ծանուցման հրապարակման պահից մինչև աճուրդի բացմանը նախորդող օրը ընկած ժամանակահատվածը՝ յուրաքանչյուր երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ օրերին, ժամը 9:00-ից մինչև 17:00 (բացառությամբ ժամը 13:00-ից մինչև 14:00):

Գույքի պատկանումը իրականացվում է ընկերության հավաստագրային կառավարչի կողմից:

Նախքան աճուրդի սկսվելը աճուրդային հանձնաժողովը գրանցում է մասնակիցներին և յուրաքանչյուր մասնակցի, ներկայացված մասնակցի վկայականի համարին համապատասխան, տրամադրում է քարտ:

Աճուրդը վարում է աճուրդավար:

Աճուրդավարը մասնակիցներին առաջարկում է մեկնարկային գնով գնել լոտը (լոտերի վաճառքը իրականացվում է վերը նշված հերթականությամբ):

Աճուրդավարի մուտքի երրորդ հարվածից հետո գնող չլինելու դեպքում, մեկնարկային գինն իջեցվում է նվազագույնը հավելման (քայլի) չափով այնքան, մինչև մասնակիցներից մեկը բարձրացնելով մասնակցի իր վկայականի համարին համապատասխանող քարտը, տալիս է իր հանձնառությունը հայտարարած գնով լոտը ձեռք բերելու մասին և աճուրդավարի կողմից անմիջապես հռչակվում է աճուրդի հաղթած մասնակից:

Աճուրդի հաղթող է հռչակվում այն մասնակիցը, ով առաջինն է բարձրացնում իր մասնակցի վկայականին համարին համապատասխանող քարտը և տալիս իր հանձնառությունը լոտը հայտարարված գնով գնելու մասին:

Եթե մեկից ավելի մասնակիցներ միաժամանակ գնային հայտ են ներկայացրել հավասար չափով, ապա աճուրդային հանձնաժողովի որոշմամբ միաժամանակ հայտ ներկայացրած մասնակիցների միջև իրականացվում է դասական աճուրդ՝ նրանց կողմից առաջարկած գինն ընդունելով որպես մեկնարկային գին: Եթե մեկնարկային գնից բարձր առաջարկներ մասնակիցները չեն ներկայացնում, ապա աճուրդի հաղթած մասնակից է հռչակվում վիճակահանության արդյունքներով ընտրված մասնակիցը:

Աճուրդավարի կողմից աճուրդի հաղթող հռչակված մասնակիցը պարտավոր է՝ հանձնարարագիր ստանալուց 30 րոպեի ընթացքում, վճարել իր առաջարկած գնի առնվազն 3 տոկոսի չափով գումար, որը սահմանված ժամկետում (10 օրվա ընթացքում) հետագա վճարումները կատարելու դեպքում նախավճարի հետ միասին հաշվարկվում է վճարման ենթակա գումարի մեջ (մեկից ավելի լոտ ձեռք բերելու դեպքում նախավճարը հաշվարկվում է ամենաբարձր վճարքի գին ունեցող լոտի վճարման ենթակա գումարի մեջ), իսկ վճարումներից խուսափելու դեպքում չի վերադարձվում և ելնելով մասնակիցը զրկվում է աճուրդի մասնակցելու իրավունքից: Եթե աճուրդում հաղթող հռչակված մասնակիցը սահմանված ժամկետում (հանձնարարագիր ստանալուց 30 րոպեի ընթացքում) վճարում է իր առաջարկված գնի առնվազն 3 տոկոսի չափով գումար, ապա նա ճանաչվում է աճուրդի հաղթող և ստորագրում է աճուրդի արդյունքների մասին արձանագրությունը:

Աճուրդում վաճառված յուրաքանչյուր լոտի գրաված գինը նվազագույն ափհատավարձի հինգապատիկի չափը չգերազանցելու դեպքում հաղթող մասնակիցը աճուրդի արդյունքների մասին արձանագրության ստորագրման օրը վճարում է լոտի ամբողջ գումարը:

Աճուրդում չհաղթաց մասնակիցներին, որպիսի դեպքերի առկայության դեպքում, նախնական նախավճարը վերադարձվում է աճուրդի ավարտից մեկ ափհատանիշային օրվա ընթացքում:

Վաճառվող լոտերին (գույքին) ծանոթանալու համար զանգահարել (09) 41-86-59 հեռախոսահամարով:

Աճուրդի կանոնակարգին ծանոթանալու (որը տրամադրվում է դիմումի առկայության դեպքում, մեկ օրվա ընթացքում, պատճենահանման ծախսերը վճարելու պայմանով) և լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել ք.Երևան, Հրազդան Քոչարի 27 հասցեով կամ զանգահարել աճուրդային հանձնաժողովին՝ հեռախոս՝ 27-65-94, ինտերնետ՝ URL: //www.privatization.am:

ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ
մրցույթով մասնավորեցվող «Ամասիայի հյուրանոց» ՊՓԲԸ-ի մասին

Առաջնորդվելով ՀՀ կառավարության 2004թ.-ի հուլիսի 22-ի թիվ 1156-Ն որոշմամբ, ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությունը հրավիրում է մասնավորեցման բոլոր սուբյեկտներին մասնակցելու «Ամասիայի հյուրանոց» ՊՓԲԸ-ի պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերի մասնավորեցման մրցույթին:

1. Ընդհանուր տեղեկություններ

1.1.	Մասնավորեցվող օբյեկտի հասցեն	Շիրակի մարզ, գ.Ամասիա
1.2.	ՀՀ կառավարության որոշման համարը եւ ամսաթիվը	N1156-Ն, 22.07.04թ.
1.3.	Գնահատված ակտիվներ (հազ.դրամ)	2757
1.4.	Կանոնադրական կապիտալ (հազ.դրամ)	2658
1.5.	Ընկերության բաժնետոմսերի գնահատված արժեքը(հազ.դրամ)	2658
1.6.	Ընկերության պարտավորությունները (հազ.դրամ) 01.01.04թ. դրությամբ	99

2. Տեղեկություններ մասնավորեցվող գույքի մասին

«Ամասիայի հյուրանոց» ՊՓԲԸ-ին պատկանող հյուրանոցի շենքը ԴԱՀԿ-ի համապատասխան ստորաբաժանման կողմից 02.07.2004թ.-ին կազմակերպած աճուրդում վաճառվել է: ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության «Պետական գույքի գույքագրման և գնահատման գործակալություն» ՊՈԱԿ-ի կողմից սույն թվականի դեկտեմբերի 5-ին ընկերությունում կատարվել է փաստացի գույքի և պարտավորությունների գույքագրում և կազմվել է համապատասխան ակտ:

2.1. Ստորև բերվում են գույքագրման արդյունքները.

Հ/Հ	Արտադրանքեսական գույքի, գործիք. անվանումը	Քանակը	Թողարկման տարին	Սկզբնական հաշվեկշռային արժեքը /դրամ/
1.	Նոջասենյակի կահույք	1	1990	2037
2.	Մահճակալ	1	1987	169
3.	Սառնարան	3	1978	1167
4.	Հեռուստացույց	3	1973	1379
5.	Հեռուստացույց	1	1986	828
6.	Նոջասենյակի կահույք	1	1973	512
7.	Հասակի չափիչ	2	1978	828
	Ընդամենը	12		6920

Ընկերությունը աշխատանքային գործունեություն չի ծավալում:

Ընկերությունը 05.11.2004թ. դրությամբ դեբիտորական և կրեդիտորական պարտավորություններ չունի:

2.2.Համաձայն ՀՀ կառավարության N1156-Ն, 22.07.04թ. որոշման, Ընկերության 1999-2003 թվականների տնտեսական գործունեության արդյունքներով վճարման ենթակա շահաբաժինների գծով պարտավորություններ չունի:

3. Մրցույթին մասնակցելու պայմաններ

3.1. Մրցույթին մասնակցելու իրավունք ունեն մասնավորեցման այն սուբյեկտները (կամ նրանց լիազոր ներկայացուցիչները), որոնք սահմանված կարգով վճարել են մրցույթի նախավճարը /տես 5.1 և 5.2 կետերը/ և 5.3 կետում նշված ժամկետում ներկայացրել են մրցութային առաջարկ, որը ներառում է հետևյալ փաստաթղթերը՝

ա/ հայտ (ձևը կարելի է ստանալ ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության «Աճուրդի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունից /այսուհետև՝ Աճուրդի կենտրոն/)

բ/ մրցույթի հաղթողին որոշելու պայմանների վերաբերյալ գրավոր առաջարկ՝ (տես՝ 3.12 կետը),

գ/ մրցույթի նախավճարի կատարման իսկությունը հաստատող վճարային փաստաթղթերի պատճենները,

դ/ իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող մասնակիցների գրանցման եւ հիմնադիր փաստաթղթերի պատճենները,

ե/ լիազորագիր՝ մրցույթի մասնակից ընկերության /հաստատված ելնելով ընկերության կողմից/ կամ ֆիզիկական անձի /հաստատված նոտարական կարգով/ կողմից լիազորված անձի համար,

զ/ գործառնական ծրագիր:

3.2. Մրցութային առաջարկը փակ ծրարով ներկայացվում է Աճուրդի կենտրոնի վարչատնտեսական բաժին՝ մինչև 5.3 կետում նշված ժամկետի լրանալը:

3.3. Մրցույթի մասնակիցների՝ մրցութային պայմաններին համապատասխան ներկայացրած առաջարկությունները պետք է արտահայտված լինեն թվային ցուցանիշներով և փոփոխ չլինեն ՀՀ կառավարության կողմից սահմանված նվազագույն չափերից, եթե դրանք սահմանված են (տես 3.12 կետը):

3.4. Մրցութային առաջարկները ներկայացվում են հայերեն լեզվով, իսկ օտար լեզուներով գրված փաստաթղթերը կարող են ուղեկցվել թարգմանություններով:

Թարգմանությունների բացակայության դեպքում փաստաթղթերը կթարգմանվեն հանձնաժողովի կողմից:

3.5. Մրցույթին ներկայացվող փաստաթղթերը ներկայացվում են տպագիր կամ պարզ ընթեռնելի ձեռագրով:

3.6. Ծրարը պետք է հասցեագրված լինի մրցութային հանձնաժողովին՝ նշելով մասնավորեցվող օբյեկտի անվանումը:

3.7. Մրցութային առաջարկները կարող են ընդունվել նաև ֆաքսիմիլային կապով: Ստացված փաստաթղթերը Աճուրդի կենտրոնի վարչատնտեսական բաժնում դրվում են ծրարի մեջ և փակվում:

3.8. Ներկայացված ծրարները Աճուրդի կենտրոնի վարչատնտեսական բաժնի կողմից կնքվում և մուտագրվում են:

3.9. 5.3 կետում նշված ժամկետի լրանալուց հետո ներկայացված առաջարկները չեն ընդունվի:

3.10. Դիմողները մինչև 5.5 կետում նշված ժամկետի լրանալը կարող են հանձնաժողովին գրավոր դիմում ներկայացնել՝ մրցույթին չմասնակցելու վերաբերյալ: Սահմանված ժամկետից ուշ ներկայացրած այդպիսի դիմումները քննարկման ենթակա չեն:

3.11. Մրցույթի պահանջներին մրցութային առաջարկի անհամապատասխանության դեպքում մրցութային առաջարկ ներկայացրած սուբյեկտին մրցույթի մասնակցի կարգավիճակ չի տրվում և մրցութային առաջարկը հանվում է հետագա քննարկումից:

3.12. Մրցույթի հաղթողի որոշման համար առաջադրվում են հետևյալ պայմանները.

մասնավորեցվող բաժնետոմսերի համար առաջարկվող գինը,

/նվազագույն գինը՝ 665 հազ.դրամ/

ներդրումների չափը՝ տարիների կտրվածքով,

սոցիալական երաշխիքներ, այդ թվում ափհատատեղերի և նվազագույն ափհատավարձի վերաբերյալ:

3.13. Մրցույթի հաղթող է ճանաչվում այն մասնակիցը, որի առաջարկը առավելագույն չափով է բավարարում մրցույթի պայմաններին:

3.14. Մրցույթի կայացման դեպքում ընկերությունը պետք է վերանվանվի «Ամասիայի հյուրանոց» փակ բաժնետիրական ընկերության:

4. Վճարումներ եւ պայմանագրի կնքում

4.1. Մրցույթի հաղթողը 10-օրյա ժամկետում ստանում է մրցույթի արդյունքների հաստատված արձանագրության օրինակը: Մրցույթի մյուս մասնակիցները կարող են ստանալ արձանագրության պատճենները:

4.2. Մրցույթի հաղթողը գույքի վաճառքի գումարը պետք է վճարի մրցույթի արձանագրության օրինակը ստանալու օրվանից հաշված մեկ ամսվա ընթացքում:

4.3. Որպես մրցույթի նախավճար վճարված գումարն ընդգրկվում է օբյեկտի վաճառքի գնի մեջ և մրցույթում չհաղթելու կամ մինչև 5.5 կետում նշված ժամկետի լրանալը մրցույթին մասնակցելուց հրաժարվելու դեպքում հետ չի վերադարձվում, և մրցույթը հանվում է չկայացած:

4.4. Մրցույթի հաղթողը արձանագրության օրինակը ստանալու օրվանից հաշված 60 օրվա ընթացքում ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության հետ կնքում է մասնավորեցման պայմանագիր:

4.5. Համաձայն ՀՀ կառավարության N1156-Ն, 22.07.04թ. որոշման, մասնավորեցման պայմանագրում պետք է նախատեսվի, որ գույքային իրավունքների պետական գրանցման և գույքի արժեքի որոշման հետ կապված վճարները ու տուրքերը կատարվում են գնորդի հաշվին՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

4.6. Սահմանված ժամկետում վճարումները չկատարելու և պայմանագիրը չկնքելու դեպքում մրցույթի հաղթողի վճարած նախավճարի գումարը նրան հետ չի վերադարձվում, և մրցույթը հանվում է չկայացած:

4.7. Մրցույթով մասնավորեցման արդյունքում գնորը հանդիսանում է նաև գնահատման պահից հետո առաջացած իրավունքների և պարտավորությունների իրավահաջորդը:

4.8. Վճարումները կատարվում են Հայաստանի Հանրապետության արժույթով:

5. Մրցույթի անցկացման այլ պայմաններ

5.1	Մրցույթի նախավճարի չափը	265 800 դրամ
5.2	Մրցույթի նախավճարի մուտագրման հաստակ հաշիվը	Թիվ1 տեղական գանձապետական բաժանմունք դրամային - 900013145017
5.3	Մրցութային առաջարկի ներկայացման վերջին ժամկետը	14-ը հունվարի 2005թ., ժամը՝14:00
5.4	Մրցութային առաջարկի ներկայացման վայրը	ք.Երեւան, Հր.Քոչարի 27, «Աճուրդի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական բաժին
5.5	Մրցույթի անցկացման օրը, ժամը և վայրը	14-ը հունվարի 2005թ. , ժամը՝15:00 - ք.Երեւան, Հանրապետության Հրապարակ, ՀՀ Կառավարական 2-րդ շենք, ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն
5.6	Ֆաքսիմիլային կապ	(3741) 27-65-94
5.7	Ինտերնետ	URL: //www.privatization.am

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել Աճուրդի կենտրոն՝ 27-65-94 հեռախոսահամարով:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն

Սեփականաշնորհում

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ
մրցույթով մասնավորեցվող
Հրազդանի կինոցանցի «Հրազդան» կինոթատրոնի գույքի
մասին

Առաջնորդվելով ՀՀ կառավարության 2004թ.-ի հոկտեմբերի 14-ի թիվ 1491-Ն որոշմամբ, ՀՀ կառավարությանն առընթեր գույքի կառավարման վարչությունը հրավիրում է մասնավորեցման բոլոր սուբյեկտներին մասնակցելու Հրազդանի կինոցանցի «Հրազդան» կինոթատրոնի գույքի մասնավորեցման մրցույթին:

1. Ընդհանուր տեղեկություններ

1.1.	Մասնավորեցվող օբյեկտի հասցեն	Լ. Հրազդան, Մոսկովյան փող.
1.2.	ՀՀ կառավարության որոշման համարը եւ ամսաթիվը	N1491-Ն, 14.10.04թ.
1.3	Ընկերության շենքերի մակերեսը (Մ), որից	567.75
♦	առանձնական մակերեսը (Մ)	315.75
♦	ոչ առանձնական մակերեսը (Մ)	252
1.4.	Զբաղեցրած հողային տարածքը (հա)	0.1
	Տեղեկություններ հողահատկացման հիմքերի մասին	Անժամկետ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման վկայական N0090954, 12.04.2000թ
1.5.	Գնահատված արժեքը (հազ.դրամ)	3941

2. Տեղեկություններ մասնավորեցվող գույքի վերաբերյալ

(հազ.դրամ)

Հ/Հ	Տուգանիքի անվանումը	Հաշվեկշռային արժեքը	Գնահատված արժեքը
2.1.	Հիմնական միջոցներ, այդ թվում	119.8 *	3989.4
♦	շենքեր /1հա/	93.9	3168.9
♦	մեքենաներ և սարքավորումներ /2հա/	0.2	9.6
♦	ար. սնս. գույք, գործիք և այլն /378հա/	25.7	810.9
2.2.	Ընթացիկ ակտիվներ	2.1	2.1
2.3.	Ընթացիկ պարտավորություններ	51	51

* *Ներկայացված են հիմնական միջոցների սկզբնական արժեքները*

3. Մրցույթին մասնակցելու պայմաններ

3.1. Մրցույթին մասնակցելու իրավունք ունեն մասնավորեցման այն սուբյեկտները (կամ նրանց լիազոր ներկայացուցիչները), որոնք սահմանված կարգով վճարել են մրցույթի նախավճարը /տես 5.1 և 5.2 կետերը/ և 5.3 կետում նշված ժամկետում ներկայացրել են մրցութային առաջարկ, որը ներառում է հետևյալ փաստաթղթերը՝

ա/ հայտ (ձևը կարելի է ստանալ ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության «Սմուռի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունից /այսուհետև՝ Սմուռի կենտրոն/)

բ/ մրցույթի հաղթողին որոշելու պայմանների վերաբերյալ գրավոր առաջարկ՝ (տես՝ 3.12 կետը),

գ/ մրցույթի նախավճարի կատարման իսկությունը հաստատող վճարային փաստաթղթերի պատճենները,

դ/ իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող մասնակիցների գրանցման եւ հիմնադիր փաստաթղթերի պատճենները,

ե/ լիազորագիր՝ մրցույթի մասնակից ընկերության /հաստատված տվյալ ընկերության կողմից/ կամ ֆիզիկական անձի /հաստատված նոտարական կարգով/ կողմից լիազորված անձի համար,

զ/ գործարար ծրագիր

3.2. Մրցութային առաջարկը փակ ծրարով ներկայացվում է Սմուռի կենտրոնի վարչատնտեսական բաժին՝ մինչև 5.3 կետում նշված ժամկետի լրանալը:

3.3. Մրցույթի մասնակիցների՝ մրցութային պայմաններին համապատասխան ներկայացրած առաջարկությունները պետք է արտահայտված լինեն թվային ցուցանիշներով և փոխ չլինեն ՀՀ կառավարության կողմից սահմանված նվազագույն արժեքներից, եթե դրանք սահմանված են (տես 3.12 կետը):

3.4. Մրցութային առաջարկները ներկայացվում են հայերեն լեզվով, իսկ օտար լեզուներով գրված փաստաթղթերը կարող են ուղեկցվել թարգմանություններով:

Թարգմանությունների բացակայության դեպքում փաստաթղթերը կթարգմանվեն հանձնաժողովի կողմից:

3.5. Մրցույթին ներկայացվող փաստաթղթերը ներկայացվում են տպագիր կամ պարզ ընթեռնելի ձեռագրով:

3.6. Ծրարը պետք է հասցեագրված լինի մրցութային հանձնաժողովին՝ նշելով մասնավորեցվող օբյեկտի անվանումը:

3.7. Մրցութային առաջարկները կարող են ընդունվել նաև ֆաքսիմիլային կարգով: Ստացված փաստաթղթերը Սմուռի կենտրոնի վարչատնտեսական բաժնում դրվում են ծրարի մեջ և փակվում:

3.8. Ներկայացված ծրարները Սմուռի կենտրոնի վարչատնտեսական բաժնի կողմից կնքվում և մուտագրվում են:

3.9. 5.3 կետում նշված ժամկետի լրանալուց հետո ներկայացված առաջարկները չեն ընդունվի:

3.10. Դիմողները մինչև 5.5 կետում նշված ժամկետի լրանալը կարող են հանձնաժողովին գրավոր դիմում ներկայացնել՝ մրցույթին չմասնակցելու վերաբերյալ: Սահմանված ժամկետից ուշ ներկայացրած այդպիսի դիմումները ենթակա չեն քննարկման:

3.11. Մրցույթի պահանջներին մրցութային առաջարկի անհամապատասխանության դեպքում մրցութային առաջարկ ներկայացրած սուբյեկտին մրցույթի մասնակցի կարգավիճակ չի տրվում և մրցութային առաջարկը հանվում է հետագա քննարկումից:

3.12. Մրցույթի հաղթողի որոշման համար առաջադրվում են հետեւյալ պայմանները.

մասնավորեցվող գույքի համար առաջարկվող գինը, /նվազագույն գինը՝ 985 հազ.դրամ/

ներդրումների չափը՝ տարիների կտրվածքով,

3.13. Մրցույթի հաղթող է ճանաչվում այն մասնակիցը, որի առաջարկը առավելագույն չափով է բավարարում մրցույթի պայմաններին:

4. Վճարումներ եւ պայմանագրի կնքում

4.1. Մրցույթի հաղթողը 10-օրյա ժամկետում ստանում է մրցույթի արդյունքների հաստատված արձանագրության օրինակը: Մրցույթի մյուս մասնակիցները կարող են ստանալ արձանագրության պատճենները:

4.2. Մրցույթի հաղթողը գույքի վաճառքի գումարը պետք է վճարի մրցույթի արձանագրությունը ստորագրելու պահից հաշված մեկ ամսվա ընթացքում:

4.3. Որպես մրցույթի նախավճար վճարված գումարը ընդգրկվում է օբյեկտի վաճառքի գնի մեջ և մրցույթում չհաղթելու կամ մինչև 5.5 կետում նշված ժամկետի լրանալը մրցույթին մասնակցելուց հրաժարվելու դեպքում հետ է վերադարձվում:

4.4. Մրցույթի հաղթողը արձանագրության օրինակը ստանալու օրվանից հաշված 60 օրվա ընթացքում ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության հետ կնքում է մասնավորեցման պայմանագիր:

4.5. Համաձայն ՀՀ կառավարության 14.10.04թ. թիվ 1491-Ն որոշման, մասնավորեցման պայմանագրում պետք է նախատեսվի, որ գնողը պարտավորվում է՝

- գույքային իրավունքների պետական գրանցման և գույքի արժեքի որոշման հետ կապված վճարները ու տուրքերը կատարվում են գնողի հաշվին՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով
- ծրագիր՝ ամսվա ընթացքում մարել 2004թ-ի հունվարի 1-ի դրությամբ Հրազդան կինոցանցի 51 հազ. դրամի պարտավորությունները,
- «Հրազդան» կինոթատրոնի գործունեության պրոֆիլը պահպանել առնվազն 20 տարի ժամկետով:

4.6. Սահմանված ժամկետում վճարումները չկատարելու և պայմանագիրը չկնքելու դեպքում մրցույթի հաղթողի վճարած նախավճարի գումարը նրան հետ չի վերադարձվում, և մրցույթը հանվում է կայացած:

4.7. Վճարումները կատարվում են Հայաստանի Հանրապետության արժույթով:

5. Մրցույթի անցկացման այլ պայմաններ

5.1	Մրցույթի նախավճարի չափը	394 100 դրամ
5.2	Մրցույթի նախավճարի մուտագրման հաշվի հաշիվը	Թիվ1 տեղական գանձապետական բաժանմունք դրամային - 900013145017
5.3	Մրցութային առաջարկի ներկայացման վերջին ժամկետը	11-ը հունվարի 2005թ. , ժամը՝14:00
5.4	Մրցութային առաջարկի ներկայացման վայրը	Լ.Երեւան, Հր. Քոչարի 27 «Սմուռի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական բաժին
5.5	Մրցույթի անցկացման օր, ժամը և վայր	11-ը հունվարի 2005թ. , ժամը՝15:00 Լ.Երեւան, Հանրապետության Հրապարակ, ՀՀ Կառավարական 2-րդ շենք, ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն
5.6	Ֆաքսիմիլային կապ	27-65-94
5.7	Ինտերնետ	URL: //www.privatization.am

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել Սմուռի կենտրոն՝ 27-65-94 հեռախոսահամարով:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ
մրցույթով մասնավորեցվող
Հրազդանի կինոցանցի գույքի կազմից առանձնացված
«Բարեկամություն» կինոթատրոնի գույքի
մասին

Առաջնորդվելով ՀՀ կառավարության 2004թ.-ի հոկտեմբերի 14-ի թիվ 1491-Ն որոշմամբ, ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությունը հրավիրում է մասնավորեցման բոլոր սուբյեկտներին մասնակցելու Հրազդանի կինոցանցի «Բարեկամություն» կինոթատրոնի գույքի մասնավորեցման մրցույթին:

1. Ընդհանուր տեղեկություններ

1.1.	Մասնավորեցվող օբյեկտի հասցեն	Լ. Հրազդան, Միկրոշրջան
1.2.	ՀՀ կառավարության որոշման համարը եւ ամսաթիվը	N1491-Ն, 14.10.04թ.
1.3	Ընկերության շենքերի մակերեսը (Մ)	907.93
1.4.	Զբաղեցրած հողային տարածքը (հա)	0.2
	Տեղեկություններ հողահատկացման հիմքերի մասին	Անժամկետ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման վկայական N0090953, 12.04.2000թ
1.5.	Գնահատված արժեքը (հազ.դրամ)	8484

2. Տեղեկություններ մասնավորեցվող գույքի վերաբերյալ

(հազ.դրամ)

Հ/Հ	Տուգանիքի անվանումը	Հաշվեկշռային արժեքը	Գնահատված արժեքը
2.	Հիմնական միջոցներ, այդ թվում	239.6 *	8484
♦	շենքեր /1հա/	151.8	5067.7
♦	մեքենաներ և սարքավորումներ /78հա/	29.6	1150.9
♦	տրանսպորտային միջոցներ /4հա/	10.3	753
♦	ար. սնս. գույք, գործիք և այլն /733հա/	47.9	1512.4

* *Ներկայացված են հիմնական միջոցների սկզբնական արժեքները*

3. Մրցույթին մասնակցելու պայմաններ

3.1. Մրցույթին մասնակցելու իրավունք ունեն մասնավորեցման այն սուբյեկտները (կամ նրանց լիազոր ներկայացուցիչները), որոնք սահմանված կարգով վճարել են մրցույթի նախավճարը /տես 5.1 և 5.2 կետերը/ և 5.3 կետում նշված ժամկետում ներկայացրել են մրցութային առաջարկ, որը ներառում է հետեւյալ փաստաթղթերը՝

ա/ հայտ (ձևը կարելի է ստանալ ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության «Սմուռի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունից /այսուհետև՝ Սմուռի կենտրոն/)

բ/ մրցույթի հաղթողին որոշելու պայմանների վերաբերյալ գրավոր առաջարկ՝ (տես՝ 3.12 կետը),

գ/ մրցույթի նախավճարի կատարման իսկությունը հաստատող վճարային փաստաթղթերի պատճենները,

դ/ իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող մասնակիցների գրանցման եւ հիմնադիր փաստաթղթերի պատճենները,

ե/ լիազորագիր՝ մրցույթի մասնակից ընկերության /հաստատված տվյալ ընկերության կողմից/ կամ ֆիզիկական անձի /հաստատված նոտարական կարգով/ կողմից լիազորված անձի համար,

զ/ գործարար ծրագիր

3.2. Մրցութային առաջարկը փակ ծրարով ներկայացվում է Սմուռի կենտրոնի վարչատնտեսական բաժին՝ մինչև 5.3 կետում նշված ժամկետի լրանալը:

3.3. Մրցույթի մասնակիցների՝ մրցութային պայմաններին համապատասխան ներկայացրած առաջարկությունները պետք է արտահայտված լինեն թվային ցուցանիշներով և փոխ չլինեն ՀՀ կառավարության կողմից սահմանված նվազագույն արժեքներից, եթե դրանք սահմանված են (տես 3.12 կետը):

3.4. Մրցութային առաջարկները ներկայացվում են հայերեն լեզվով, իսկ օտար լեզուներով գրված փաստաթղթերը կարող են ուղեկցվել թարգմանություններով:

Թարգմանությունների բացակայության դեպքում փաստաթղթերը կթարգմանվեն հանձնաժողովի կողմից:

3.5. Մրցույթին ներկայացվող փաստաթղթերը ներկայացվում են տպագիր կամ պարզ ընթեռնելի ձեռագրով:

3.6. Ծրարը պետք է հասցեագրված լինի մրցութային հանձնաժողովին՝ նշելով մասնավորեցվող օբյեկտի անվանումը:

3.7. Մրցութային առաջարկները կարող են ընդունվել նաև ֆաքսիմիլային կարգով: Ստացված փաստաթղթերը Սմուռի կենտրոնի վարչատնտեսական բաժնում դրվում են ծրարի մեջ և փակվում:

3.8. Ներկայացված ծրարները Սմուռի կենտրոնի վարչատնտեսական բաժնի կողմից կնքվում և մուտագրվում են:

3.9. 5.3 կետում նշված ժամկետի լրանալուց հետո ներկայացված առաջարկները չեն ընդունվի:

3.10. Դիմողները մինչև 5.5 կետում նշված ժամկետի լրանալը կարող են հանձնաժողովին գրավոր դիմում ներկայացնել՝ մրցույթին չմասնակցելու վերաբերյալ: Սահմանված ժամկետից ուշ ներկայացրած այդպիսի դիմումները քննարկման ենթակա չեն:

3.11. Մրցույթի պահանջներին մրցութային առաջարկի անհամապատասխանության դեպքում մրցութային առաջարկ ներկայացրած սուբյեկտին մրցույթի մասնակցի կարգավիճակ չի տրվում և մրցութային առաջարկը հանվում է հետագա քննարկումից:

3.12. Մրցույթի հաղթողի որոշման համար առաջադրվում են հետեւյալ պայմանները.

մասնավորեցվող գույքի համար առաջարկվող գինը, /նվազագույն գինը՝ 2121հազ.դրամ/

ներդրումների չափը՝ տարիների կտրվածքով,

3.13. Մրցույթի հաղթող է ճանաչվում այն մասնակիցը, որի առաջարկը առավելագույն չափով է բավարարում մրցույթի պայմաններին:

4. Վճարումներ եւ պայմանագրի կնքում

4.1. Մրցույթի հաղթողը 10-օրյա ժամկետում ստանում է մրցույթի արդյունքների հաստատված արձանագրության օրինակը: Մրցույթի մյուս մասնակիցները կարող են ստանալ արձանագրության պատճենները:

4.2. Մրցույթի հաղթողը գույքի վաճառքի գումարը պետք է վճարի մրցույթի արձանագրությունը ստորագրելու պահից հաշված մեկ ամսվա ընթացքում:

4.3. Որպես մրցույթի նախավճար վճարված գումարը ընդգրկվում է օբյեկտի վաճառքի գնի մեջ և մրցույթում չհաղթելու կամ մինչև 5.5 կետում նշված ժամկետի լրանալը մրցույթին մասնակցելուց հրաժարվելու դեպքում հետ է վերադարձվում:

4.4. Մրցույթի հաղթողը արձանագրության օրինակը ստանալու օրվանից հաշված 60 օրվա ընթացքում ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության հետ կնքում է մասնավորեցման պայմանագիր:

4.5. Համաձայն ՀՀ կառավարության 14.10.04թ. թիվ 1491-Ն որոշման, մասնավորեցման պայմանագրում պետք է նախատեսվի, որ գնողը պարտավորվում է՝

- գույքային իրավունքների պետական գրանցման և գույքի արժեքի որոշման հետ կապված վճարները ու տուրքերը կատարվում են գնողի հաշվին՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով,
- «Հրազդան» կինոթատրոնի գործունեության պրոֆիլը պահպանել առնվազն 20 տարի ժամկետով:

4.6. Սահմանված ժամկետում վճարումները չկատարելու և պայմանագիրը չկնքելու դեպքում մրցույթի հաղթողի վճարած նախավճարի գումարը նրան հետ չի վերադարձվում, և մրցույթը հանվում է կայացած:

4.7. Վճարումները կատարվում են Հայաստանի Հանրապետության արժույթով:

5. Մրցույթի անցկացման այլ պայմաններ

5.1	Մրցույթի նախավճարի չափը	848 400 դրամ
5.2	Մրցույթի նախավճարի մուտագրման հաշվի հաշիվը	Թիվ 1 տեղական գանձապետական բաժանմունք դրամային - 900013145017
5.3	Մրցութային առաջարկի ներկայացման վերջին ժամկետը	11-ը հունվարի 2005թ. , ժամը՝14:00
5.4	Մրցութային առաջարկի ներկայացման վայրը	Լ.Երեւան, Հր. Քոչարի 27 «Սմուռի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական բաժին
5.5	Մրցույթի անցկացման օր, ժամը և վայր	11-ը հունվարի 2005թ. , ժամը՝15:00 Լ.Երեւան, Հանրապետության Հրապարակ, ՀՀ Կառավարական 2-րդ շենք, ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն
5.6	Ֆաքսիմիլային կապ	27-65-94
5.7	Ինտերնետ	URL: //www.privatization.am

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել Սմուռի կենտրոն՝ 27-65-94 հեռախոսահամարով:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն

ԱԶԳ

Մամուլի մարզ

Պաշտպանության փոխնախարար, գեներալ-լեյտենանտ Մանվել Գրիգորյանը երկրապահներին հորդորեց կանգնել պետության կողմին, «տեր լինել մեր ժողովրդին, երկրին, պետականությանը»: «Պատերազմը դեռ ավարտված չէ», ասաց փոխնախարարը շաբաթ օրը Երկրապահ կամավորականների միության (ԵԿՄ) 6-րդ համագումարի իր ելույթում:

«100 տոկոսով մարդ կար (թիկունքում կանգնած), թե չէ ով է հովանավորում նրա հուշերի տպագրությունը», ասաց Մանվել Գրիգորյանը՝ նկատի ունենալով Նաիրի Հունանյանի «Իմը» ժողովածուի հրատարակումը: «Դա տեսոր էր հայ ազգի հանդեպ, հնարավոր չէ, որ նրանց թիկունքում մարդիկ չլինեին»:

Վարչապետ Անդրանիկ Մարգարյանին անհանգստացնում է մեկ բան. «Ջեղած տեղը աղմուկ են բարձրացնում, բաժակի մեջ փոթորիկ են անում՝ ասելով «Երկրապահը» չկա, «Երկրապահին» վտանգ է սպառնում, տրհումներ կան: Դա այդպես չէ: Ինչ է եղել, ինչո՞ւ ենք խառնվել իրար»: Վարչապետը, որ նաեւ ԵԿՄ անդամ է, իր ելույթում նկատեց. «Մինչեւ անգամ ընկերների, եղբայրների, տան մեջ էլ վեճեր են լինում. ո՞վ ասաց, որ էդ վեճը պետք է դուրս գա, թերթերի բեռանն ընկնի, բախվեցիները, եվրոպացիները եւ ամերիկացիներն ուրախանան մեր տան խնդիրներով»:

Մինչ այդ ելույթ էր ունեցել Վազգեն Սարգսյանի մայրը: Գրեսա Սարգսյանի մուտքը դահլիճ անմիջապես բոլոր երկրապահներին ոտքի կանգնեցրեց: «Կրկին աղացուցեցիք, որ մեծամասնությունդ իսկական քաջարի երկրապահներ եք, որովհետեւ վերջին ժամանակներում ձեր մեջ ես նկատել էի նաեւ վախկոտների, ովքեր վախենում են մեր տուն, Սպարապետի թանգարան գալուց, վախենում են ինչ-որ բանից զրկվելուց», ասաց նա:

Գրեսա Սարգսյանին վշտացնում է վերջին ժամանակներում շրջանառվող միտքը, թե «երկրապահներն անհաշտ են, «Երկրապահը» պառակտվում է», ինչպես նաեւ հանգամանքը, որ «մեր ոչ լեգիտիմ ղեկավարության աղաչանքի քաղաքականության պատճառով եկանք, ո՞ւր հասանք՝ կորցրինք մեր դեմքը, դիրքը, մեր համաշխարհային հարգանքն ու պատիվը, հաղթողի մեր կեցվածքը», հետեւաբար՝ «այս արհավիրքի պահին Երկրապահը պիտի համախմբվի»:

«Ձեր մայրերի անունից բոլորից պարզապես պահանջում եմ, ինչպես նաեւ հրամայում եմ՝ իրավունք չունեք պառակտվելու եւ պառակտելու այս հզոր կառույցը: Ո՞վ է ձեզ իրավունք տվել պառակտվելու: Վազգենը կյանք է դրել, ջիղ է դրել, անգնելի իրենց տրված տոպրակների մեջ եղած կեղտոտ ու քրքված հագուստից առաջացած վիրավորանքն էր:

Մի՞թե 11 տարեկան որբ աղջնակին Ամանորից առաջ կարելի է մաքված ու ոչ մաքուր վարտիքներ նվիրել կամ 12 տարեկան միակողմանի ծնողազուրկ տղային՝ 8 ամսականի տոտիկներ կամ պատառոտված բաճկոն:

Այդպիսի «օգնությունից» վիրավորված ու զայրացած ծնողներն ու հարազատները բողոքել են կենտրոնի աշխատակցին ու նույնիսկ հրաժարվել դրանից: Այդ պահին այնտեղ գտնված կանանցից մեկը պատմեց, որ նրանց առաջարկվել է դիմում գրել եւ հրաժարվել ամենամսյա օգնությունից, որ նախորդ ամիսներին բաղկացած է եղել զուտ սննդամթերքից՝ բրինձ, տոմատ, ձեթ եւ այլն:

Մի զոհված ազատամարտիկի մայր բղավել է. «Որդիս Արցախի համար զոհվեց, որ իր երեխային այսօր քջոտ շորե՞ր նվիրեն»:

Ասում են նվերից չեն դժգոհում, բայց այս պարագայում մարդկանց դժգոհությունը հասկանալի է, որովհետեւ վիրավորվել է նրանց արժանապատվությունը:

Նրանցից հավանաբար ոչ ոք չէր բողոքի, եթե իբրեւ օգնություն ստացած հագուստը լիներ գոնե մաքուր ու երեխաների տարիքին համապատասխան: Դժվար թե գտնվի մեկը, որն իր երեխային կամ հարազատի որբ մնացած երեխային ցանկանա մեծացնել չքավորի ու թշվառի հոգեբանությամբ:

ՌՈՒԶԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

Վազգեն Սարգսյանի մայրը «Երկրապահից» պահանջեց չպառակտել «այս հզոր կառույցը»

Պաշտպանության փոխնախարար Մանվել Գրիգորյանը չի բացառում Արմեն Սարգսյանի վաղաժամկետ ազատումը

Վերջին շաբաթներին հայկական մամուլը հեղեղված էր ԵԿՄ-ի հավանական պառակտման մասին հոդվածներով: Անգամ խոսակցություն էր գնում, որ կազմակերպության նախագահ Մանվել Գրիգորյանն է փոխարինվելու: Սակայն պաշտպանության փոխնախարարը ոչ միայն մնաց նախագահի պաշտոնում, այլեւ առաջադրված միակ թեկնածուն էր եւ վարչության նախագահ ընտրվեց 44 կողմ, 0 դեմ ձայներով: Փոխնախագահներ ընտրվեցին Առա Կեսիկյանը, Խաչիկ Մկրտչյանը եւ Մյասնիկ Մալխասյանը:

Միանշանակ դժվար է ասել, թե «Երկրապահի» ներսում ինչ է կատարվում: Այդ պատճառով՝ մեջբերումներ անենք համագումարի ելույթներից եւ մամուլի ասուլիսից: Նախապես նշենք, որ համագումարին չէին եկել «Երկրապահի» հայտնի դեմքերից Հակոբ Հակոբյանն ու Սասուն Միխայելյանը (նրանք Հայաստանից բացակայում էին), Մուրադ Կիրակոսյանը, Մուշեղ Սաղաթելյանը, Ալբերտ Բազեյանը: Ընդդիմությունից ներկա էին Արամ Զ. Սարգսյանը եւ Սմբատ Այվազյանը:

«Հոկտեմբերի 27-ը ցավ էր հայության համար, բոլոր նրանց, ով իրեն հայ է համարում: Դա թշնամանք էր ոչ թե որեւէ մեկի, այլ մեր երկրի, ժողովրդի նկատմամբ: Թեկուզ 100 տարի էլ հետո՝ դրանց պատվիրատուներն այս ժողովրդի առաջ դատապարտեն կրելու», իր ելույթում ասաց գեներալ-լեյտենանտ Գրիգորյանը: Հիշեցնենք, որ «Երկրապահը» ստեղծվել է 1993 թ. ամռանը դարաբաղյան պատերազմի թեժ շրջանում՝ Վազգեն Սարգսյանի գլխավորությամբ:

ԵԿՄ 6-րդ համագումարի հայտարարության մեջ հոկտեմբերի 27-ը համարվեց «Հայաստանի դեմ ուղղված մեծագույն ոճրագործություն, եւ, անկախ գործին տրված լուծումներից, համոզված ենք, որ ոճրագործների թիկունքում կանգնած ուժերն արժանանալու են ժողովրդի արդար դատապարտանքին»: Մամուլի ասուլիսում փոխնախարար Գրիգորյանը կրկնեց, որ հոկտեմբերի 27-ի ոճրագործության հետեւում ներսից կամ դրսից մարդիկ կային:

«Պետք չէ մոլորվել, մենք ունենք հարազատներ, ընտանիքներ, մենք ունենք մեր հարազատ երկիրը, մենք ունենք մեր ժողովուրդը, մենք ունենք մեր ապագան, մենք ունենք մեր անցյալը, մենք ունենք մեր ներկան: Ինչպես ասաց Գարեգին Նժդեհը, մենք ունենք մեր Աստվածը

Համամասնականը՝ դեռի մեծամասնական տանող ուղիղ ճանապա՞rh

Խորհրդարանական կրճերի առակա համամասնական-մեծամասնական հարաբերակցության խնդիրը դեռ մինչեւ փետրվար, մինչեւ օրինագծի նոր ընթերցումը, մնալու է անդրկուլիսային խորհրդակցությունների ու առեւտրի առակա: Իրենց առաջադրած տարբերակը չընդունելու դեռոիում Դաշնակցությունը նույնիսկ սպառնում է դուրս գալ կոալիցիայից: Համենայն դեռս, հայկական քաղաքական իրականության մեջ, անկախ բոլոր վիճակումներից, բացահայտորեն գերադասվում է համամասնական ընտրակարգը: 100 տոկոսանոց համամասնական ընտրակարգին կողմ է նաեւ ՄԱԿ խմբակցությունը: Խմբակցության անդամ ***Գրիգոր Ղոնջեյանի*** *հետ հարցազրույցով* ***«Ազգը»*** *փորձեց պարզաբանել դրդապատճառները, որոնք մեր քաղաքական ուժերին հարկադրում են արժեւորել կամ մերժել ընտրակարգի այս կամ այն հարաբերակցությունը:*

- Մեծամասնական ընտրակարգը ընտրողի հետ ավելի մոտիկ կապ է ենթադրում, քան համամասնականը, եւ կարելի է ասել, որ այդ տեսանկյունից ավելի ժողովրդավար է:

- Ընդհանուր առմամբ, իհարկե, մեծամասնականը ժողովրդավարական արժեքներին ավելի համահունչ ընտրակարգ է: Սակայն աբխարհի որեւէ երկիր, որ նախընտրում է այդ ընտրակարգը՝ ԱՄՆ, Մեծ Բրիտանիա, դրան հանգել է համամասնականի միջոցով: Եթե վերուծենք այդ երկրների փորձը, այնտեղ չկա բացառապես մաժորիտար համակարգ: Այնտեղ մաժորիտարով ընտրված մարդն անկուակցական լինել չի կարող: Մեծ Բրիտանիայում մեծամասնականով ընտրված մարդը դառնում է կուակցության կառավարման գերագույն մարմնի անդամ: Այսինքն, մեծամասնականի ու համամասնականի չոր տարանջատում չկա: Բայց այս պահին, եւ իմ կարծիքով դեռ երկար ժամանակ, համամասնականը մեզ անհրաժեշտ է, որպեսզի ձեւավորվեն աբխարհայացքներ, քաղաքական ծրագրեր:

Մենք գնում ենք, որ համաժողովրդական ընտրությունների քաղաքակիրթ ձեւը կուակցությունների մեջ ընթացող մրցակցությունն է, որոնք ունեն հստակ ծրագիր, գաղափարախոսություն ու որոշակի կենսագրություն:

- Բայց բոլորս էլ ընդունում ենք, որ Հայաստանում կուսակցական մշակույթը դեռեւս ձեւավորված չէ:

- Մենք չենք գնում, որ քանի դեռ կուակցական մշակույթը չի կայացել, համամասնականը ժամանակավրեպ է: Հակառակը, քանի դեռ այդպիսին չի մթնոլորտը, քաղաքական մշակույթը չի էլ ձեւավորվի, կուակցությունները չեն էլ կայանա, որովհետեւ դրա համար անհրաժեշտ պայմանները չեն սահմանվում: Ես որպես ժողովրդավարությունից նահանջ ու վնասակար հանգամանք ավելի շատ կդիտի ոչ թե սա, այլ կուակցությունների օրենքում նեռառված փոփոխությունները՝ արհեստական պահանջները դրանց թվականակի, այլ չափանիշների վերաբերյալ եւ:

- Համամասնականի գերադասումը խորհրդարանը չի՞ դարձնի բացառապես միայն քաղաքական անձնավորված շահերի արտահայտման տեղ եւ ի վերջո անջրպետ առաջացնի ժողովրդի ու իր միջեւ:

- Քաղաքական շահերը միշտ էլ անձնավորված են այնքանով, որքանով մեր քաղաքացիները ձայն են տալիս այս կամ այն կուսակցությանը: Նախընտրական քարոզարշավների ընթացքում մեծամասնականով առաջադրված թեկնածուների խոսքերը կապված են հիմնականում տվյալ տարածքի բնակիչների հոգսերի հետ: Դա սխալ է, մեր բնակչությունը վերջապես պիտի հասկանա, որ մեծամասնականով ընտրված պատգամավորը պետք է զբաղվի ոչ թե տվյալ տարածքում ջուր կամ խողովակ քաշելու խնդրով, այլ օրենսդրությամբ: Իհարկե, հնարավոր է, որ կառաջանա կարգի որոշակի խզում կոնկրետ տարածքների հետ: Բայց ընդհանուր առմամբ ԱԺ-ն օրենսդրություն ստեղծող մարմին է:

- Համենայն դեպս, ընտրողների մեջ պատգամավորի կոչման ու անելիքի այդպիսի ընկալում չկա:

- 100 տոկոսանոց ընտրակարգը միանգամից կվերացնի ընտրողների թյուր պատկերացումներն ու պատրանքները: Մենք ունենք տեղական ինքնակառավարման մարմիններ, ունենք կառավարություն, որոնք իրականացնում են տարածքային քաղաքականությունը: Եվ դա ի վերջո կընկալվի: Համամասնականի միջոցով ընտրողները հնարավորություն կստանան համաժողովրդական ընտրությունների ժամանակ ձայն տալու այն կուսակցություններին, որոնք համարժեք օրենսդրություն կառաջարկեն տեղական ինքնակառավարման մակարդակի ու լիազորությունների, այսինքն, կոնկրետ իրենց հետաքրքրող խնդիրների վերաբերյալ: Առանձին վերցրած պատգամավորը չի էլ կարող խոստանալ, որ ինքը կգնա խորհրդարան եւ այս կամ այն օրենքը կընդունի: Օրենքն ընդունվում է ձայների հարաբերակցությամբ, իսկ դա հնարավոր է կուսակցությունների միջոցով: Իհարկե, կուսակցությունները իրենց խնդիրները եւ խոստումները կկապեն տարածքների հետ, բայց խոսքը պիտի վերաբերի դրանց զարգացման ծրագրերին, այսինքն, օրենսդրական այդպիսի հիմքերի ստեղծմանը:

Բնակիչներն իրենք են ընտրում ավագանիներին եւ քաղաքապետներին, պրոբլեմների լուծումը նրանցից պիտի ակնկալեն:

- Կան կարծիքներ, որ, այնուամենայնիվ, ընտրողի հետ անմիջական կապը չկորցնելու իմաստով լուծում կարող է դառնալ երկու պալատների ստեղծումը խորհրդարանում, որոնցից մեկն անմիջապես կազբաղվի համայնքային կոնկրետ խնդիրներով:

- Երկու պալատի սկզբունքը սովորաբար կիրառվում է այն երկրներում, որտեղ վարչատարածքային բաժանումները համապատասխանում են դաշնային սկզբունքներին: Դրանք կամ պատմականորեն ձեւավորված նահանգներ են, ինչպես ԱՄՆ-ում կամ ինչպես Ռուսաստանում, իբրեւ ավտոնոմիայի առանձին սուբյեկտներ: Նաեւ երկրի մասշտաբներն ու մեծությունը հաշվի առնենք: Մենք մոնոէթնիկ, կոմպակտ երկիր ենք: Այն զարգացած երկրներում (Միավորված թագավորություն, ԱՄՆ) որտեղ ընտրակարգը միայն մեծամասնական է, այնտեղ մեծամասնական թեկնածուն անպայման կուսակցության անդամ է: Դա պատմականորեն ձեւավորված մշակույթ է, որը մենք չունենք: Այնտեղ հնարավոր չէ բնակչության աջակցություն ստանալ, եթե մարդը ձեւավորված քաղաքական համակարգի ուղղակի անդամը չէ կամ նրա օժանդակությունը չի ստանում:

- Համամասնականին գերադասվությունն տալը պատճառաբանում են ձայների առուվաճառքի մեծ հնարավորությունների առկայությամբ մեծամասնական ընտրակարգի ժամանակ, բայց համամասնականի ժամանակ կարող են ավելի բարձր մակարդակով եւ ավելի մեծ գումարներ շրջանառվել:

- Ես դա ոչ կարող եմ հաստատել, ոչ ժխտել: Եթե կա չարիք, ապա 2 դեռքում էլ կարտահայտվի:

ԿԱՐԻՆԵ ՂՈՆՋԵՅԱՆ

Հեռանկարում հնարավոր է

Համամասնական ընտրակարգի բացահայտ գերադասումից եւ մեծամասնականի անտեսումից խուսափելու համար ՀՅԴ խմբակցության ղեկավար **Լեւոն Մկրտչյանը** 2 ճանապարհ է առաջարկում՝ «Կամ պառլամենտի կառուցվածքային փոփոխություն, կամ, ինչպես շատ երկրներում է իրականացվում, կուսակցական ցուցակների միջոցով կուսակցությունների ռեյտինգային քվեարկության անցկացում: Դա հնարավորություն կտա հաշվի առնելու նաեւ տվյալ կուսակցության յուրաքանչյուր անդամի ռեյտինգը ընտրողների մեջ:

Բայց այն, ինչ այժմ կատարվում է Հայաստանում, մեր փոքր երկրի համար նորմալ է, որովհետեւ մեր մեծամասնական տարածքների մեծ քանակը՝ 56, իսկապես հնարավորություն չի տալիս, որ պատգամավորը լրջորեն զբաղվի ընդհանրական հարցերով: Այժմ կատարվում է առաջին լուրջ քայլը մեծամասնական ընտրատարածքները խոշորացնելու հարցում: Դա նաեւ հարված կլինի տեղային մտածողությանը, որը, ցավոք, մեզանում առկա է»:

«Ժողովրդավարություն» խմբակցության անդամ **Մկրտիչ Մինասյանը,** հակառակ իշխող դիրքորոշումներին, այլ կարծիքի է: Մեր հարցին նա պատասխանեց. «Ես կարծում եմ, որ մեր երկիրը դեռեւս լիարժեք քաղաքական համակարգ չունի, որպեսզի հասարակությունն ինքը չքաղաքականանա, այլ կուսակցություններն իրենք կարողանան նրան տանել իրենց հետեւից: Բայց ցավոք, էդպես չէ, եւ ես կարծում եմ, որ դեռեւս պիտի հասցեագրված պատգամավոր լինի, այսինքն, կոնկրետ մարդիկ պիտի բարձրացնեն կոնկրետ տարածքների հարցերը: Եթե ընդհանրապես վերացնում ենք մեծամասնական ընտրակարգը, ստացվում է, որ այդ տարածքների շահերը ներկայացնողներ չեն լինելու»:

Կ. Դ.

«ՀԵՏԱՔՐՔԻՐ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ»

ՀՀԾ-ն հույսը դրել է Տեր-Պետրոսյանի վրա

Իսկ Թուրքիան՝ Հայաստանում հիշյալ իշխանությունների վերականգնման

Դեկտեմբերի 9-ին Երեւանի կառավարության նիստերի դահլիճում Հայոց համազգային շարժում կազմակերպությունը հրավիրել էր 14-րդ համագումարը՝ նպաստելու համար Հայաստանի առաջին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի վերադարձին քաղաքականություն: Նույն օրն Անկարայում գործող Եվրասիական ռազմավարական հետազոտությունների կենտրոնի կովկասյան բաժնի աբխատակից Հաթեմ Ջաբբարլան ինտերնետային «Հաբեր անալիզ» թերթի էջերում հրապարակեց հերթական հոդվածը, որտեղից թուրքական կառավարությունը նպաստի ՀՀՇ-ի քաղաքական ապարեզ վերադարձին:

Այլ կերպ, ՀՀՇ-ն հույսը դրել է Տեր-Պետրոսյանի, իսկ Թուրքիան՝ ՀՀՇ-ի վրա: Ուրեմն նրանք իրար լրացնում են: Ինչո՞ւ եւ ինչպե՞ս: Մինչ հարցին պատասխանելը նշենք, որ Ջաբբարլու հոդվածը կրում է «Վրաստանում վարդյա, Ուկրաինայում նարնջագույն հեղափոխություն: Գուցե Հայաստանում ձնծաղկի՞» խորագիրը: Հեղինակը հոդվածում անդրադառնալով Վրաստանում «վարդյա», իսկ Ուկրաինայում «նարնջագույն» հեղափոխություններին, դրանք համարում է հեղափոխության ոչ ավանդական ձեւ, ապա նշում է, որ ներկայումս այդպիսի հեղափոխություններ իրագործելու հնարավորություն ունի միայն ԱՄՆ-ը, այնուհետեւ արձանագրում է «ձնծաղկի» հեղափոխության նախանշանների մասին, որոնք իբր ի հայտ են եկել Հայաստանում այն պահին, երբ Ուկրաինայում անորոշություն էր տիրում:

Ըստ Ջաբբարլու, Հայաստանում «ձնծաղկի» հեղափոխության նախանշանները տեսանելի են դարձել դեռեւս 2004 թ. մարտին, երբ ընդդիմությունը համախմբվելով «Արդարություն» դաշինքի շուրջը, սկսել է նախագահ Ռոբերտ Քոչարյանի հրաժարականի պահանջով ցույցեր եւ հանրահավաքներ կազմակերպել: Քանի որ, հեղինակի կարծիքով, ընդդիմադիրների շրջանում բացակայում էին «գաղափարական միասնությունն ու համատեղ գործունեության ռազմավարությունը», ուստի նրանք առանց լուրջ դիմադրության տեղի են տվել Քոչարյանի առջեւ:

Այնուհետեւ Ջաբբարլին մատնանշում է ընդդիմության ձախողման պատճառները: Նա ձախողումը պայմանավորում է Վրաստանի «վարդյա» հեղափոխությանը տված սխալ գնահատականով, ինչպես նաեւ ընդդիմության անհաշվենկատ գործունեությամբ, որն առանց հաշվի առնելու Հայաստանի ներքին եւ արտաքին զարգացումները, ինչպես նաեւ Քոչարյանի վարչակարգի ուժը, վրացական հեղափոխության սցենարը նույնությամբ փորձել է կիրառել երկրում:

Ըստ երեւույթին հեղինակն անհաշվենկատության մեջ է մեղադրում նաեւ հայկական ընդդիմության հետ համագործակցող ԱՄՆ-ի Ազգային ժողովրդավարության ինստիտուտին ու Սորոսի հիմնադրամին: Նա վկայակոչելով հանդերձ ամերիկյան վերոհիշյալ ինստիտուտի երեւանյան գրասենյակի ղեկավար Չեթ Ռոջերի ընդդիմությանը ցուցաբերած աջակցությունը, ինչպես նաեւ Հայաստանի ոչ ամենա քաղաքական կուսակցություններին եւ հասարակական կազմակերպություններին հասցեագրած քննադատությունները, միաժամանակ նշում է, որ այդ ինստիտուտը հայկական ընդդիմությանն այնքան չի օգնել, որքան վրացականին: Բացի այդ, ոչ հայկական ընդդիմությունն է վրացականի չափ ուժեղ եղել, ոչ էլ Հայաստանի իշխանությունները՝ Վրաստանի իշխանությունների չափ թույլ, ինչի հետեւանքով 2004 թ. մարտին ամերիկյան ինստիտուտի եւ Սորոսի հիմնադրամի աջակցությամբ սկզբնավորված հակաիշխանական շարժումը Հայաստանում ձախողվել է:

Հաթեմ Ջաբբարլին ձախողման մասին ափսոսանքով է նշում: Պարզապես նրան հուսադրում է 2004 թ. նոյեմբերի վերջերին հարեւան երկրներում իրականացված «վարդյա» եւ «նարնջագույն» հեղափոխությունների ազդեցության տակ հայաստանյան ընդդիմության նոր աբխուժացումը: «Թեեւ, գրում է նա, աբխուժացման նախաձեռնությունը պատկանում է «Արդարություն» դաշինքին, այնուամենայնիվ Հայոց համազգային շարժումը պատրաստվում է վերադառնալ քաղաքականության ասպարեզ: Հրաժարականից հետո Հայաստանի առաջին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանն ակտիվորեն չի մասնակցել քաղաքական կյանքին: Սակայն լուրջ եւ ծրագրված քարոզչական աբխատանքի դեռքում նա ունի ժողովրդական լայն զանգվածների աջակցությունը ձեռք բերելու առիթն ու հնարավորությունը: Իհարկե, դրա համար անհրաժեշտ են հնարավորությունների երջանակներում տնտեսական, քաղաքական եւ սոցիալական ինքնատիպ մոտեցումներ, ռազմավարության եւ մարտավարության նոր դրսեւորումներ, ինչպես նաեւ ընդդիմադիր մյուս կուսակցությունների հետ համագործակցության կարեւորումը: Այլապես անկախության պայքարում քաջողության անցյալը չի բավարարելու, որ նա հանդես գա առաջնորդողի եւ կազմակերպողի դերում»:

Այս ամենը հիմք է տալիս ենթադրելու, որ Ջաբբարլին Տեր-Պետրոսյանին առաստրեն շնորհում է ոչ միայն ՀՀՇ-ին, այլեւ ընդդիմադիր բոլոր կուսակցություններին առաջնորդելու առաքելություն, չմոռանալով հուշել նրան իշխանափոխության համար ԱՄՆ-ի աջակցությանն աղավինելու անհրաժեշտությունը: Ջաբբարլու կարծիքով. «Հայաստանյան ընդդիմությունը նարնջագույն հեղափոխության ազդեցության տակ է: Հետեւաբար այն ուժը, որը կենտրոնանալով սոցիալ-տնտեսական եւ քաղաքական խնդիրների վրա կկազմակերպի ժողովրդական լայն զանգվածներին, իր շուրջը կհամախմբի քաղաքական կուսակցություններին, հաշվի կառնի ԱՄՆ-ի գլխավորությամբ մեծ տերությունների տնտեսական, քաղաքական եւ ռազմական շահերը, կհայտարարի Ղարաբաղի հիմնահարցին խաղաղ լուծում տալու մասին եւ կաղավինի ԱՄՆ-ի աջակցությանը, ապա կկարողանա Հայաստանում իրականացնել «ձնծաղկի» հեղափոխություն»:

Ընդդիմադիր բոլոր կուսակցություններին առաջնորդելու առաքելությունը Տեր-Պետրոսյանին շնորհելիս Ջաբբարլուն միաժամանակ հորդորում է, որ նա գլխավորելով «ձնծաղկի» հեղափոխությունը Հայաստանում, ազգանվեր մեկ այլ գործով հարուստացնի իր քաղաքական կենսագրությունը:

Ակամա հարց է ծագում՝ ինչո՞վ է պայմանավորված թուրք հեղինակի Տեր-Պետրոսյանով միջնորդավորված անասելի հոգատարությունը Հայաստանի նկատմամբ: Հարցի պատասխանը միանշանակ է. Թուրքիայի քաղաքական հաշվարկներով: Որոնք են դրանք. այդ հարցին ահա թե ինչ է պատասխանում Անկարայում գործող ռազմավարական կենտրոնի աբխատակից Հաթեմ Ջաբբարլին. «Թուրքիան պետք է լրջորեն հետեւի իր սահմանների անմիջական հարեւանությամբ տեղի ունեցող այս զարգացումներին եւ դրանց առնչությամբ մշակի տարբեր սցենարներ: Հատկապես նա պետք է կենտրոնանա Հայաստանի հնարավոր զարգացումների վրա եւ այդ զարգացումների ընթացքն ուղղորդելու համար հանդիպի հայկական քաղաքական կուսակցություններին՝ ելնելով իշխանափոխության հնարավորությունից ճիշտ գնահատի իշխանության հավանական թեկնածուի հնարավորությունը՝ մերձենալու համար տվյալ կուսակցության կամ առաջնորդի հետ: Այս ամենն անհրաժեշտ է այսպես կոչված ցեղասպանության հարցում հայկական քարոզչությունը թուլացնելու եւ տարածաշրջանային գերտերություն դառնալու համար»:

Հաշվի առնելով այն, որ ՀՀՇ-ի 14-րդ համագումարը բանաձեւով Հայոց ցեղասպանության մեջ մեղադրել է ոչ թե Օսմանյան կայսրությանը, այլ նացիոնալ-սոցիալիզմի գայթակղությանը տուրք տված հայկական գաղափարախոսությանը, ապա կարելի է ասել, որ Հայաստանի նկատմամբ Ջաբբարլու Տեր-Պետրոսյանով միջնորդավորված հոգատարությունն անհիմն չէ:

Տեր-Պետրոսյանի գլխավորությամբ ՀՀՇ-ն էլ Թուրքիային հուզող խնդիրների նկատմամբ է հոգատար: Դա արդարացնում է Ջաբբարլու հոգատարությունը եւ փոխադարձ բնույթ է հաղորդում դրան: Մնում է հուսալ, որ Տեր-Պետրոսյանը վերադառնա քաղաքականություն, ՀՀՇ-ի շուրջը համախմբի ընդդիմադիր բոլոր կուսակցություններին եւ Թուրքիային հիասթափություն չպատճառելու համար Հայաստանը հաջողությամբ առաջնորդի դեռքի «ձնծաղկի» հեղափոխություն:

ՀԱՐՈՒԹ ՉԱՔԱՐՅԱՆ

Իլհամ Ալիեւի կամակորություններին ղասասխանում է Սալոմե Զուրաբիշվիլին

«Մենք հրաժարվում ենք որեւէ տնտեսական պատժամիջոց կիրառել Հայաստանի նկատմամբ»

«Վրաստանը լավ հարաբերություններ ունի ինչպես Հայաստանի, այնպես էլ Ադրբեջանի հետ», Ֆրանսիայի ասել է Վրաստանի արտգործնախարար Սալոմե Զուրաբիշվիլին՝ անդրադառնալով ադրբեջանա-վրացական սահմանին այս օրերին կուտակված հարյուրավոր վագոնների խնդրին, հաղորդում է «Ազատությունը»:

Ադրբեջանը փակել է բեռնափոխադրումների հոսքը դեպի Վրաստան՝ կասկածներ ունենալով, թե դրանց մի մասը հետագայում կարող է մտնել Հայաստան: Զուրաբիշվիլին հայտարարել է, թե Թբիլիսին համաձայն է կանխել իր տարածով զինամթերքի փոխադրումը, սակայն ավելացրել է. «Մենք հրաժարվում ենք որեւէ տնտեսական պատժամիջոց կիրառել Հայաստանի նկատմամբ»:

Վրաստանի արտգործնախարարն ասել է, որ եթե Վրաստանը չեզոքից բացի, այլ դիրքորոշում ունենար երկու երկրների հակամարտության հարցում, «մենք կորդեգրեինք հարաբերությունների սրման տրամաբանությունը, ինչը կործանարար կլիներ ոչ միայն մեր եւ մեր հարեւանների, այլեւ ամբողջ տարածաշրջանի համար»:

Հիշեցնենք, որ նոյեմբերի վերջերին ադրբեջանական կողմը վրա-ադրբեջանական սահմանի իր հատվածում կանգնեցրել է Կենտրոնական Ասիայից Վրաստան շարժվող մոտ 900 բեռնատար վագոններ՝ պատճառաբանելով, որ դրանց մի մասը հետագայում տարվում է Հայաստան: Ադրբեջանի առաջին փոխվարչապետ Աբբաս Աբբասովը, ըստ «Թրենդ» գործակալության, ասել էր. «Մենք վրացական իշխանություններից պահանջում ենք խստիվ արգելել դեպի Հայաստան (Վրաստանի տարածով) Ադրբեջանից տարանցումը»:

Նկատենք, որ անգամ պատերազմի տարիներին Վրաստանի տարածով հայերն ու ադրբեջանցիները առեւտուր են արել: Մասնավորապես Սադախլոյի շուկան անցնող 13-14 տարիներին եղել է եւ մնում է թերեւ այն միակ տեղը մեր տարածաշրջանում, որտեղ հայն ու ադրբեջանցին իրար հետ լեզու են գտնում:

Եվ պատերազմի տարիներին, եւ այսօր Հայաստանի շուկայում կան ադրբեջանական թեյը, թառափը: Եղել են ամիսներ, երբ Հայաստան է ներկվել ադրբեջանական վառելիք: Անցած ամառ, երբ Հայաստանում կտրուկ աճեց հացի գինը, հանրապետության սահմանամերձ շրջաններում ամիսներ շարունակ վաճառվում էր Ադրբեջանի Գյանջա քաղաքի ալրաղացում փաթեթավորված ալյուրը: Հակառակը՝ ադրբեջանցիները միշտ էլ ախորժակով կերել են Սեւանի ավազանում աճեցված կարտոֆիլը, լճի սիգ ձուկը, Սոթիսկի գազարն ու կաղամբը: Ըստ ոչ պաշտոնական տվյալների՝ Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ Վրաստանի եւ Իրանի տարածքով իրականացվող ապրանքաշրջանառությունը կազմում է 40 միլիոնից ավելի դոլար:

Ինչո՞ւ Ադրբեջանը հանկարծ որոշեց, որ թույլ չի տա Վրաստանի տարածքով Ադրբեջանից եկող ապրանքների մուտքը Հայաստան: Բաքվի «Զերկալո» թերթը նկատում է, որ այս քայլով Բաքուն փորձում է ճնշել Թբիլիսիին հիմնականում երկու պատճառով: Թերթը հիշեցնում է, որ «վարդյա հեղափոխության» օրերին վրաց մախայինները սահմանում բռնագրավել են զանգվածային գործողությունները ճնշելու համար Ադրբեջանից ուղարկված հատուկ նյութերն ու առարկաները՝ արցունքաբեր գազ, մահակներ: Այս մասին հավանաբար տեղեկացված է եղել Իլհամ Ալիեւը, որն, ի դեպ, այնքան էլ խանդավառությամբ չընդունեց Միխայիլ Սաակաշվիլու իշխանության գալը Վրաստանում:

Երկրորդ՝ Բաքուն ցանկանում է պատժել Թբիլիսիին, որը հոկտեմբերի վերջերին ՄԱԿ-ի գլխավոր հանձնաժողովի քվեարկության ժամանակ («Իրավիճակն Ադրբեջանի գրավյալ տարածքներում» բանաձեւ) կողմ չքվեարկեց՝ ըստ էության ընդունելով հայանպաստ դիրքորոշում:

ԹԱՔՈՒ ՀՂԿՈՐԾԻՆ

«Մենք երջանիկ ենք Թուրքիայում»

Ըստ «Թերջումանի»՝ հայտարարում են կրոնապետները

Դեկտեմբերի 8-ին Անթալիայի արվարձաններից Բելեռում Թուրքիայի վարչապետ Ռեջեպ Թայիփ Էրդողանի անմիջական մասնակցությամբ բացվել էր իսլամի, քրիստոնեության եւ հուդայականության համերաշխությունը խորհրդանշող «Կրոնների այգին»: «Ազգը» դեկտեմբերի 10-ին անդրադարձավ բացմանը՝ համարելով դա ողջունելի քայլ, որքան էլ ուղղակիորեն առնչվի ԵՄ-ի դեկտեմբերի 17-ի գագաթաժողովին, որտեղ որոշվելու է Թուրքիայի անդամակցության բանակցությունների սկզբնավորման հարցը:

Թուրքական «Թերջուման» թերթն էլ դեկտեմբերի 13-ի համարում անդրադառնում է Պոլսո հայոց պատրիարք Մեսրոպ Բ Մութաֆյանի, Թուրքիայի հրեաների խախամապետ Իցխակ Հալեւայի եւ Հույն ուղղափառ եկեղեցու Տիեզերական պատրիարքի ներկայացուցիչ Դասիթեոս Առագնոսոպուլոսի ԵՄ-ի գագաթաժողովի նախօրյակին առած համատեղ հայտարարությանը, որտեղ նշվել է. «Մենք երջանիկ ենք Թուրքիայում»:

«Թերջումանը» չի թաքցնում, որ այս հայտարարությունը Եվրոպային հղած ուղերձ է: Այլ կերպ՝ հայտարարության հեղինակները, մինչ ԵՄ-ի գագաթաժողովը, Թուրքիային ընդառաջ քայլ են կատարել: Մութաֆյան պատրիարքը, նկատի ունենալով Անթալիայի «Կրոնների այգին», որտեղ կողք-կողքի կառուցվել է մզկիթ, եկեղեցի եւ սինագոգ, ասել է, որ Թուրքիայից բացի, աշխարհի ոչ մի երկրում չկա այդպիսի երեւույթ, դա օրինակ է հանդիսանալու քաղաքակրթությունների երկխոսության համար, միաժամանակ բարձրացնելու է Թուրքիայի վարկանիշը ԵՄ-ին անդամակցության հարցում: Թեեւ այգին, ըստ նրա, այդպիսի ակնկալիքով չի ստեղծվել:

Այնուհետեւ Մեսրոպ Բ Մութաֆյանը շարունակել է. «Եվրոպական երկրներում բնակչության գերակշռող մասը քրիստոնյա է, սակայն այդ երկրները կառավարվում են աղանդական սկզբունքով: Եկեղեցի հաճախողների թիվը 5 տոկոսից չի անցնում: Այդ իսկ պատճառով աշխարհամասը «քրիստոնեական աշխարհ» անվանելը սխալ է»:

Հայր Առագնոսոպուլոսը ելույթում անդրադարձել է Կ. Պոլսո հունաց պատրիարքի «Տիեզերականի» կոչման շուրջ Թուրքիայում ծագած բանավեճին՝ ընդգծելով, որ կոչումը որեւէ առնչություն չունի քաղաքականությանը: Իսկ խախամապետ Հալեւան «կրոնների նկատմամբ հանդուրժողականության» համար գովեստի խոսքեր է շռայլել Թուրքիայի հասցեին:

Հալեւան հիշեցրել է Թուրքիայի հրեաներին հասցեագրած Իսրայելի հրավերը եւ ավելացրել. «Մեզ կարող են հրավիրել բոլորը, սակայն մենք այստեղ գոհ ենք, որեւէ խնդիր չունենք: Թուրքիայում չունենք նաեւ դժվարություն նոր սինագոգ բացելու հարցում: 18-19 սինագոգ ունենք: Դրանք ամեն տեղ գործում են, միայն թե հաճախող լինի: Թեեւ նոր սինագոգ բացելու կարիք չունենք, սակայն ցանկության դեպքում կարող ենք բացել»:

Հ. Ղ.

Ֆրանսիացիները եւ գերմանացիները դեմ են Թուրքիայի անդամակցությանը

Եվրամիությանը Թուրքիայի անդամակցության բանակցություններ սկսելու հարցի առթիվ ԵՄ պետությունները պետք է վերջնական վճիռ կայացնեն դեկտեմբերի 17-ին Բրյուսելի գագաթաժողովում: Դրա նախօրեին ԵՄ գլխավոր երկրներում տիրող տրամադրությունները պարզելու նպատակով Ֆրանսիայի հանրային կարծիքի հետազոտման ինստիտուտը «Ֆիգարո» թերթի պատվերով հարցումներ է անցկացրել Ֆրանսիայում, Գերմանիայում, Մեծ Բրիտանիայում, Իտալիայում եւ Իսպանիայում:

Հարցումների տվյալները վկայում են, որ Ֆրանսիացիների 67 տոկոսը եւ գերմանացիների 55 տոկոսը դեմ են Թուրքիայի անդամակցությանը: Մինչդեռ բրիտանացիները (41 տոկոս), իտալացիները (49 տոկոս), իսպանացիները (65 տոկոս) դրականորեն են վերաբերվում անդամակցությանը:

Պարզվում է, որ հանրային կարծիքը չի համընկնում եվրոպացի ղեկավարների դիրքորոշմանը, որոնց մեծ մասը բացահայտորեն կողմ է արտահայտվել Անկարայի հետ քննարկումների ծավալմանը: Բրյուսելում ոչ ոք չի կասկածում, որ Թուրքիայի առջեւ կանաչ լույս կվառվի, չնայած Կիպրոսը սպառնացել է վետո դնել, եթե Անկարան շարունակի Նիկոսիայի կառավարությունը չճանաչելու գիծը:

«Ֆիգարոյի» տվյալներով, Բրյուսելում ընդունվելիք փաստաթղթում շեշտվելու է ԵՄ-Թուրքիա սերտ կապերի գոյությունը՝ անկախ բանակցությունների արդյունքից: Սակայն դրանց ձախողման դեպքում չի հիշատակվելու «գործընկերության» մասին: Եվրոպացի արտգործնախարարները երեկվանից Բրյուսելում հանդիպումներ են սկսել դեկտեմբերի 17-ի հարցերի վերջնական «կարգավորումներ» գտնելու նպատակով:

Միաբեկչություն Բաղդադում

Իրաքի արեւմուտքում սպանվել են 7 ամերիկացիներ

Երեկ առավոտյան Բաղդադի «կանաչ գոտու» մատույցներում, ամերիկացի զինծառայողների հսկիչ անցակետի մոտ մահապարտ ահաբեկիչը պայթեցրել է ականված ավտոմեքենա, որը մխրճվել է անցակետի մեջ: Որոշ գործակալությունը չի տեղեկացնում զոհերի թվի մասին, նշելով միայն, որ պայթյունը ոչնչացրել է մոտակայքում կանգնած մի քանի ավտոմեքենա «Ալ Ջազիրա» արբանյակային հեռուստատեսությունը հաղորդում է, որ ահաբեկչությունից զոհվել է առնվազն 13 մարդ, 20-ն էլ վիրավորվել են: Ամերիկյան հրամանատարությունը պնդում է, թե ամերիկացիների մեջ զոհեր չկան:

Դիտորդներից ոմանք կարծում են, որ ահաբեկչություններն իրականացվել են Սադդամ Հուսեյնի ձերբակալման առաջին տարելիցի կապակցությամբ:

Ինչ վերաբերում է Իրաքի մնացյալ մասին, երկրի արեւմուտքում շարունակվում են ամերիկյան բանակի եւ իրաքցի ապստամբների բախումները: «Ասոշիեյթեդ պրես» գործակալության տվյալներով, միայն կիրակի օրն Անբարի նահանգում սպանվել են ամերիկյան ծովային հետեւակի 7 մարտիկներ:

Ամերիկյան հրամանատարության հայտարարության մեջ նշվում է, որ զոհվածները միեւնույն զորամիավորման զինվորներ էին եւ կատարում էին «անվտանգության ապահովման եւ կայունացման» ինչ-որ գործողություն: Ի դեպ, ապստամբական ուժերի կենտրոններ Ֆալուջան եւ Ռամադին հենց Անբարի նահանգում են:

Գործողության տվյալների համաձայն, 2003 թ. մարտից՝ հակաիրաքյան պատերազմի սանձազերծումից ի վեր զոհված ամերիկացի զինծառայողների թիվն առնվազն 1296 է:

Բաղդութին հանել է իր թեկնածությունը հօգուտ Աբբասի

Պաղեստինյան «Ֆաթահ» շարժման «Թանզիմ» ռազմականացված թեւի առաջնորդ Մարուան Բաղդութին կիրակի օրը հայտարարել է, որ հանում է իր թեկնածությունը Պաղեստինի նախագահական ընտրություններում:

Ներկայումս Իսրայելում հնգակի ցմահ բանտարկության դատապարտված Բաղդութի անունից Ռամալլայում նրա հայտարարությունը տարածել է իր զինակից Մոհամմեդ Ռինայիմը:

Պաղեստինցի երիտասարդության շրջանում մեծ ժողովրդականություն վայելող Բաղդութին կոչ է արել հունվարին կայանալիք նախագահական ընտրություններում քվեարկել ՊԱԿ ներկայիս ղեկավար Մահմուդ Աբբասի օգտին:

Միաժամանակ «Թանզիմի» ղեկավարն առաջ է քաշել մի շարք պահանջներ, որոնք, իր կարծիքով, պետք է կազմեն ինքնավարության ապագա առաջնորդների քաղաքականության հիմքը: Խոսքը մասնավորապես «Ֆաթահի» եւ ՊԱԿ-ի ղեկավար մարմինների ընտրությունների, Պաղեստինում կաբառակերության քննությամբ զբաղվող հանձնաժողովի ստեղծման, պաղեստինյան հողերի օկուպացման դեմ պայքարի շարունակման, գաղթականների վերադարձի եւ այլ հարցերի մասին է:

Կոտրոր գործակալությունը նշում է, որ Բաղդութին արդեն երկրորդ անգամ է հրաժարվում մասնակցել Պաղեստինյան ինքնավարության նախագահական ընտրություններին: Նոյեմբերի 26-ին նա հանել էր թեկնածությունը հօգուտ Մահմուդ Աբբասի, բայց դեկտեմբերի 1-ին վերստին պատշաճորեն գրանցվել էր արդեն նախագահության թեկնածու:

Ամեն դեպքում Իսրայելը չի երաշխավորում Բաղդութի ազատությունը, քանզի նա բանտարկված է ահաբեկչության մեղադրանքով:

Գազան հրթիռակոծվել է 5 իսրայելցիների սպանությունից հետո

Իսրայելական օդուժի ուղղաթիռները երեկ հրթիռակոծել են Գազա քաղաքը: Քաղաքի էներգամատակարարումը խախտված է: Ավերված են կենտրոնում գտնվող բնակելի տներից մեկը եւ մետաղամշակման մի արհեստանոց: Իսրայելցիների տվյալներով, վերջինս զինամթերք էր արտադրում պաղեստինյան ահաբեկչական կազմակերպությունների համար:

Հրթիռակոծությունը նախօրեին Ռաֆահում՝ Եգիպտոսի սահմանի մոտ իսրայելցի զինծառայողների պահակակետի վրա կատարված հարձակման պատասխանն էր: Ֆրանսիայի Ռադիոն նշում է, որ պահակակետի պայթեցման եւ փոխհրաձգության հետեւանքով սպանվել են իսրայելցի 4 զինծառայողներ եւ պաղեստինցի 1 գրոհային: ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ի տվյալներով, սպանվել են 5 իսրայելցի եւ 1 պաղեստինցի: Նաեւ վիրավորվել է 6 իսրայելցի:

Հարձակման պատասխանատվությունն ստանձնել են «Համաս» արմատական շարժումը եւ ՊԱԿ-ի զինյալ թեւը հանդիսացող «Ֆաթահի ճուռակներ» խմբավորումը: Պաղեստինցիները պնդում են, թե իրենք 600 մետրանոց գետնուղի էին փորել եւ 1,5 տոննա պայթուցիկ դրել իսրայելցիների զինվորական պահակակետի տակ:

«Ֆաթահի ճուռակների» խոսնակ Աբու Մաջադը հայտարարել է, որ իրենց հարձակումը «վրիժառության առաջին քայլն է Յասեր Արաֆաթի սպանության դիմաց»: Պաղեստինյան արմատական մի շարք կազմակերպություններ մինչեւ օրս պնդում են, թե նոյեմբերի 11-ին Փարիզի արվարձանում մահացած Արաֆաթը թունավորված է եղել Իսրայելի հատուկ ծառայությունների կողմից:

Պ. Ք.

Մշակույթ

Հրաժեշտի խոսք հավերժության կառքի ուղեւորին

Ջմեռնամուտի սառն ու ջրիկ արեւի լույսի միջով, հանդիսատեսների վերջին ծափահարությունների ուղեկցությամբ մեզանից հեռացավ Խորեն Աբրահամյանը՝ մեծն արտիստն ու դերասանը: Եվ մի պահ ցուրտ օրվա մեջ լվածության ու դասարկության զգացողություն համակեց բոլորիս: Մայրաքաղաքը մի տեսակ աղքատացավ եւ արցունքոտ ծափերի տխրություն իջավ քաղաքի վրա: Հեռու այլ աշխարհներում երեւի տխրեց Շեքսպիրը, Չարենցը, տխրեց Բուլգակովը, որ մեծ դերասանը չհասցրեց խաղալ Վոլանդի դերը:

Տարօրինակ է մարդ արարածը: Մեծերի կորուստից հետո է հանկարծ հասկանում, որ ինչ-որ կարեւոր բան չի ասել նրան, երբ աղրում էր, չի մեծարել այնպես, որ հիմա հոգին խաղաղ լինի, որովհետեւ ճակատագրական պահից հետո, այսինքն այսօր, այլեւս ուշ է փոել նրանց վրա մեր դաշադրության զգեստը:

Վաղը նորից օր կբացվի, թատրոնները կլցվեն հանդիսատեսով եւ բեմի հեռավոր խորքից մեզ կնայի մեծ արտիստի շփոթված հայացքը, որ ամեն ինչ այսքան շուտ վերջացավ, որ ինքը չհասցրեց ամբողջացնել այն, ինչ երազում էր:

Գնաց Երեւանը խորհրդանշող մեծ արտիստն ու քաղաքի տղան, Երեւանի սիրուն աղջիկներին թողնելով իր ուրտի երգը:

Բարի ճանապարհ քեզ, անհանգիստ հոգի, մեծ արտիստ, որ թողեցիր քո ապրեցնող լուսածիրը մեր կյանքում եւ հեռացար զարմանալի ջահել, ինչպես Դանիայի արքայազն Համլետը՝ լինել-չլինելու մեծ հարցականը թողնելով մեզ՝ քեզ սիրողներին ու հիշողներին:

Բրավո մաեստրո, բրավո:

ՄԵՐՈՒԺԱՆ ՏԵՐ-ԳՈՒԼԱՆՅԱՆ

Խորեն Աբրահամյանը գնաց, մենք մնացինք

Նորից դեկտեմբեր է եւ կրկին հայ բեմի մեծերից մեկը գնում է (Մհեր Մկրտչյանն էլ գնաց դեկտեմբերին): Այս դեկտեմբերին գնաց Խորեն Աբրահամյանը: Համոզված կարելի է ասել՝ գնաց դեպի անմահություն: Գնաց, երբ կրկին ստեղծագործական պոռթկում էր ապրել (այս էլ որերորդ անգամ): Ինքը փառքի ու սիրո շուտ արժանացավ: Եվ, հասկանալի է, չարակամներ ու նախանձողներ շուտ վաստակեց: Մեր երկրի մշակույթի խելոք ու կիրթ նախարարները նրա կարծիքը հաշվի էին առնում, նրան հարգում էին: Ճարահատյալ՝ նրա հետ զգուշավոր հարգանքով էին վերաբերվում նաեւ նրանք, ովքեր մշակույթի ղեկավարի աթոռին էին նստում եւ իրենց «պրոֆեսիոնալ» նախարար անվանում:

Գնաց Խորեն Աբրահամյանը: Բայց ինչպե՞ս գնաց:

Հայերիս մոտ (տե, ինչու միայն՝ հայերիս) մահացած մարդուն իր տնից են հանում: Բայց Խորեն Աբրահամյանին իր տնից՝ Սունդուկյանի անվան թատրոնից չհանեցին: Անիմաստ է ասելը, որ օպերային թատրոնի շենքը շատ ավելի է հարմար հենց հուղարկավորության համար: Գուցե այդպես է, բայց ոչ այս առումով: Խորեն Աբրահամյանին իր տնից՝ Սունդուկյանի անվան թատրոնից պետք է տանեին: Ճիշտ է, 10 տարի, ուղիղ 10 տարի նա իր տունը չէր մտնում: Բայց գոնե վերջին օրը այդպիսի բան չլիներ: Մի՞թե խիղճն ու հոգին իսպառ մեռել է, մի՞թե ամենամոլի անաստվածներին տվիր, անցար ու Ահեղ դատաստանից չեք վախենում: Մարդը 50 տարուց ավելի (հապա մի պատկերացրեք՝ կես դա՞ր) այս թատրոնի ճորտն ու տերն է եղել, այս թատրոնի անվան տերն է, այստեղ է ապրել իր ամենամեծ ուրախությունները, նաեւ այստեղ է դառնացել (ինչու չէ, երբեմն նաեւ դառնացրել մեզ): Բայց իր տունն է եղել չէ՞: Մեզ մոտ արդեն ավանդույթ է դառնո՞ւմ: Հիշում եք, անշուշտ հիշում եք, Երեւանի պետական համալսարանին համալսարանի իրավունք տվողներից մեկն էլ՝ Լեւոն Ներսիսյանը, իր տնից՝ համալսարանից չգնաց:

Մենք իրե՞նց չենք սիրում, թե՞ ինքներս մեզ: Մենք իրե՞նց չենք հարգում, թե՞ ինքներս մեզ: Իհարկե՝ հարցերի երկրորդ մասը:

Մենք Խորեն Աբրահամյանին հարգել-չհարգելու իրավունքը չունենք, իրեն մեծ համարելու



ծիծաղելի ճիգեր չպիտի անենք: Ինքն իր մեծությունը հաստատել էր: Մեզ մնում էր միայն հասկանալ այդ մեծությունը եւ անգետ չմնալ: Ընդամենն՝ այսքանը:

Ցեմ ուզում ընդել, որ Խորեն Աբրահամյանի մահը պիտի համազգային սգի վերածվեր, բոլոր շուները, զվարճալիները արգելվեին, գիշերային բոլոր բարերը փակվեին, ամբողջ երկրով մեկ սեւ դրոշներ կախվեին: Չէ: Ծայրահեղության չհասնենք:

Բայց կարելի՞ էր, չէ՞, Հայաստանի հեռուստաալիքներով պտտվող բոլոր պոռնոֆիլմերի ցուցադրությունը գոնե մեկ, երկու օրով հետաձգել: Չէ, էդպես չեղավ: Այս օրերին էլ դրանք շարունակվեցին: Ավելին, կիրակի օրը ուրախ մի համերգ էր եթեր գնում Հայաստանի հեռուստատեսության առաջին ծրագրով: Նազելի մի հաղորդավար ծեծելուն սեթեւեթանքներ էր անում եւ բնավ չհիշեց, որ Խորեն Աբրահամյանի նման մեծ արտիստ է մահացել... Իսկ համերգն անցկացվում էր, ոչ ավել ոչ պակաս, Սունդուկյանի անվան թատրոնում, թատրոն, որտեղ իր կյանքի 50 տարին էր անցկացրել Խորեն Աբրահամյանը: Մի՞թե հնարավոր չէր այդ համերգը երկու-երեք օրով հետաձգել: Հնարավոր էր, եթե դա ցանկանար թատրոնի գեղարվեստական ղեկավարը՝ Վահե Շահվերդյանը: Պարզապես չցանկացավ:

Հեռուստաղեկավարներ, հոգի ունեք, չէ՞, Աստծուն տալու: Թե՞ դա էլ եք արդեն տվել՝ որպես պարտք գույքի դիմաց: Գոնե սեփականաշնորհեք:

Գնաց Խորեն Աբրահամյանը:

...Անցած տարի էր՝ 2003-ին, կրկին իր հյուրն էի, այս անգամ Նորքի իր տանը: Հարցազրույց ասեմ՝ հարցազրույց չէր: Պարզապես զրույց էր: Ամեն ինչի մասին եւ ամեն մեկի մասին խոսեցինք: Այս մեծ մարդու բնույթում ինձ համար անչափ գնահատելի մի գիծ կար. չարությամբ չէր խոսում ոչ մեկի մասին, չէր բամբասում: Դժգոհում էր, նեղվում-նեղտրվում էր, բայց չարությամբ չէր խոսում ու չէր բամբասում:

«Ցավ է, չէ՞, որ այսօր Դոմ ձեր՝ Սունդուկյանի անվան թատրոնում չեք», հարցրեցի: Ծխեց, ծխեց, տիկին Գոհարին ասաց. «Այ Գոհար, մի հաց սուրճ բեր» (թեեւ մեր երկուսի սուրճի բաժակներն էլ դեռ կիսով չափ էին դատարկել), նորից ծխեց ու ասաց. «Սերգո, դու քո տան վեճի, քո տան անհարթության մասին նստում-վեր կենում ու պատմո՞ւմ ես: Եղածը իմն է, իմ տանն է վերաբերում: Խոսենք այն մասին, որ ես պատրաստում եմ «Առաջին սիրո երգը» նորից նկարել»... Ու հետո զրույցը տարավ Օթելլոյի, Կորիոլանի, Գեւորգ Սարոյանի, Համլետի, Օսաոդ Բենդերի մասին... Ինքը մեծ մարդ էր, որովհետեւ չարություն չկար իր մեջ, իր մեջ եղած չարությունը փոխարինել, դարձրել էր մի հեչ բան, մի ոչնչություն: Այդպես էր իր երկրային կյանքի վերջին տարիներին: Գոնե ինձ այդպես երեւաց...

«...74 տարեկանում կյանքից հեռացել է Խորեն Աբրահամյանը: Մահվան պատճառը սրտամկանի ինֆարկտն է...»: Է, նրան էս օրին հաստնողները սրտամկան հեչ չունե՞ն, թե՞ իրենք իրենց օրորում են այն սին հույսով, որ Խորեն Աբրահամյանից ավելի երկար կհիվանդ:

Խորեն Աբրահամյանը գնաց, բայց մենք մնացինք: Մնացինք՝ այսպես:

ՍԵՐԳԵՅ ՍԱՐՈՅԱՆ

Նրան ճանապարհեցին ծափահարություններով

1-ին էջից

Սգո թափորը կանգ առավ Թումանյան եւ Աբովյան փողոցների խաչմերուկում, մարդկանց հայացքները ավտոբուսներ էին փնտրում, արտիստի դագաղը դրվեց մեքենայի մեջ: Մի փոքր անց ավտոբուսում տեղավորվածները դարձյալ լսեցին ծափողջույններ ու դուրս եկան, որովհետեւ տարօրինակ թվաց: Դեպի Պանթեոն՝ իր վերջին հանգրվանին արտիստին տարան ձեռքերի վրա՝ իբրեւ հարգանքի նշան: Շենքերի պատշգամբներից ու պատուհաններից թաղման թափորին հետեւում էին բազում երեւանցիներ՝ աչքերին արցունքներ:

Սակայն Հանրապետության հրապարակում նախկին առաջնորդի արձանին փոխարինած գովազդային էլեկտրոնային վահանակը համոր մեզ շարունակում էր թմբկահարել օրվա մեջ տասնյակ անգամ կրկնվող գովազդները՝ հանքային մի ջրի կամ ցեմենտ արտադրող մի կազմակերպության: Մտքերի մեջ էի. մի՞թե մի 30 րոպեով հնարավոր չէր դադարեցնել մայրաքաղաքի կենտրոնի այդ խայտառակությունը, երբ երկու երիտասարդ աղջիկներ արձագանքեցին լռությանս. «Այսպես ենք հարգում մեր մեծերին, ապա թե՝ գիտեք, որ այսօր օպերային թատրոնում շիկ աղջիկների համերգն է նախատեսված եւ մինչ այս ժամը փոփոխություն չկա, իսկ նախորդ օրը Սունդուկյանի բեմում ազգային երգի ինչ-որ մրցանակաբաշխություն է եղել»: Թատերական ինստիտուտի ուսանողները երեկ երեկոյան իբրեւ բողոքի ակցիա վառված մոմերով քայլեցին Սունդուկյանի մայր թատրոնից մինչեւ օպերային թատրոն: Սրանք մանր թվացող երեւույթներ են, սակայն խորհում էական են, ցավոք նաեւ՝ մեր կյանքի անբաժանելի տարօրինակությունները:

Ամենից ազդեցիկը մայր թատրոնի՝ իր նվիրյալ զավակին դիմավորելու պահն էր. հեռվից լսվող երաժշտությունն արդեն իսկ զգայացունց էր: Երկար տարիների արտիստի ամենօրյա աշխատավայրը՝ պատված սեւ պաստառներով, վերում՝ վառվող ջահեր, նրան դիմավորեց ծափահարությունների տարափով. իր նախկին ներկայացումներից հատված էր, ապա ինչեց «Ես իմ անուշ Հայաստանին»՝ Աբրահամյանական առնական պաթոսով ու վարակիչ կրքով: Սգո թափորն արձագանքեց հանդիսականի ծափողջույններին ու շարժվեց Կոմիտասի անվան պանթեոն:

Ըստ կարգի կատարվեց սգո արարողություն, ընթերցվեց Ամենայն հայոց հայրապետի սգո ուղերձը, հրաժեշտի խոսքերը տխուր էին, օրը՝ դառնահամ. «Սունդուկյանի բեմը ներծծված էր Խորենի քրտինքի կաթիլներով... մինչեւ վերջ: Հանճարեղ դերասան էր նա ինձ համար: «Քո արվեստից այդպես էլ չկշտացա», ասացի վերջին ներկայացմանը: Ասաց՝ չեմ թողնի, որ կշտանաս: Ամեն մի դերասանի հուղարկավորություն դառնում է ներկայացում: Խորեն Աբրահամյանը մասնակցեց իր վերջին ներկայացմանը», ձայնը բեկվում, արցունքները խեղդում էին Սոս Սարգսյանին: Խորեն Աբրահամյանը մահացավ լուսաբացին, ճիշտ այնպես, ինչպես Ռուբեն Գեւորգյանցի ֆիլմի իր հերոսը:

Խորեն Աբրահամյանի դին հանձնվեց մայր հողի հավատարմությանը՝ Հրանտ Մաթեւոսյանի հարեւանությամբ. «Պանթեոնը հարստացավ, մենք դարձյալ աղքատացանք», արձագանքվեց մթնոլորտում:

ՄԵԼՈՆԻ ԲԱԳԱՏՅԱՆ

«Մեր սոխակի» 80-ամյակն է

Ճիշտ այսօր լրանում է հայերիս ամենասիրած երգչուհու՝ Գոհար Գասպարյանի 80-ամյակը: Բազմաթիվ տիտղոսների, փառքի վկայականների, հայկական, խորհրդային եւ միջազգային մամուլում ստացած հիացական հազարավոր գնահատականների մեջ եւ դրանցից ավել՝ «Մեր սոխակը» վայելում է մի բան, որը միայն բացառիկ մեծություններին է տրվում՝ համաժողովրդական սեր: Ինչպես ասում են՝ նա մեր ապրող լեգենդն է, մեր հպարտությունը, մեր երգարվեստի խտացումը:

Ձերմորեն շնորհավորելով մեծ երգչուհուն իր ծննդյան օրվա առթիվ, ընթերցողներին տեղեկացնենք, որ հատուկ այս առիթով գրված էմանվել Մանուկյանի «Երբ արեւը ծագում է... արեւմուտից» վերնագրով ծավալուն հոդվածը հասկանալի պատճառով մեր թերթում հրատարակվելու է ոչ թե այսօրվա, այլ վաղվա համարում: Ընթերցեք այդ արժեքավոր հոդվածը:

Հայրենասեր սերունդ դաստիարակելու համար

Երեկ մեկնարկեց «Հայաստանն իմ հայրենիքն է» հանրապետական երիտասարդական փառատոնը: Հայաստանի մշակույթի եւ երիտասարդության հարցերի նախարարության կազմակերպած այս փառատոնի նպատակն է նպաստել երիտասարդության շրջանում հայրենասիրական դաստիարակությանը, ազգային արժեքների պահպանմանն ու տարածմանը, ստեղծագործական, կատարողական ունակությունների բացահայտմանը, ինքնադրսեւորմանը, հասակակիցների հետ մշակութային կապերի եւ համագործակցության ամրապնդմանը, հարազատ երկրի անցյալի եւ նվաճումների վերաբերյալ իմացության բարձրացմանը:

Նախարարության երիտասարդական քաղաքականության վարչության պետ Արսեն Սողոմոնյանի կարծիքով այսօր բազմաթիվ փառատոներ, մրցույթներ են կազմակերպվում, որոնք չեն համապատասխանում ազգային արժեքների ձեւավորված ավանդույթներին, իսկ այս փառատոնի միջոցով նրանք փորձում են նոր կյանք մտնող երիտասարդներին ցույց տալ այն ամենը, ինչի շնորհիվ գոյատեւել է մեր պետությունն ու ժողովուրդը:

Մասնակիցները ՀՀ մարզերի, Երեւանի եւ Արցախի 8-10-րդ դասարանցիներ են, բուհերի ուսանողներ, 16-30 տարեկան երիտասարդներ: Երեկ տեղի ունեցավ կերպարվեստի եւ լուսանկարների ցուցահանդեսների բացումը: Ներկայացված էին մոտ 200 աշխատանքներ: Մշակույթի փոխնախարար Լիլիթ Ասատրյանն ասաց, որ փառատոնի շրջանակներում ներկայացված աշխատանքների թիվը կհասնի 1000-ի: «Շատ կարեւոր է, որ օգնենք երիտասարդ արվեստագետներին՝ ճանապարհ հարթելու իրենց ստեղծագործական ուղում», ասաց նա:

Փառատոնի շրջանակներում կազմակերպվելու են նաեւ շարադրության, ազգային եւ հեղինակային երգերի, ինստալեկտուալ խաղի եւ «Հայաստանն իմ հայրենիքն է» թեմայով սոցիալական հոլովակի սցենարի մրցույթներ: Փառատոնի աշխատանքները կամփոփվեն դեկտեմբերի 21-ին՝ ամփոփիչ համերգ-մրցանակաբաշխությամբ: Այդ օրը տեղի կունենա նաեւ ընթացիկ տարում երիտասարդության ոլորտի տարբեր բնագավառներում ակտիվ մասնակցություն ցուցաբերած երիտասարդների համար խրախուսական մրցանակաբաշխությունը:

Նախարարության երիտասարդական քաղաքականության վարչության պետ Արսեն Սողոմոնյանն ասաց, որ փառատոնն ամենամյա է լինելու, հետագայում փորձելու են մեծացնել մասնակիցների թիվը, փառատոնին ներգրավել նաեւ Ջավախքի եւ սփյուռքի մեր հայրենակիցներին:

ԹԱՄԱՐ ՄԵԼՔՈՆՅԱՆ

Էդգար Մանուշարյանը Հայաստանի լավագույն ֆուտբոլիստ

Ավանդույթի համաձայն, յուրաքանչյուր մրցաշրջանի ավարտից հետո հարցման միջոցով որոշվում է Հայաստանի լավագույն ֆուտբոլիստը: Այս անգամ հարցումն անցկացվեց ֆուտբոլի հանրապետական ֆեդերացիայի մամուլի քարտուղարության կողմից: Բացի լրագրողներից, հարցմանը մասնակցել են նաեւ բարձրագույն խմբի 8 ակումբների նախագահները, գլխավոր մարզիչները, մարզչական շտաբները, ինչպես նաեւ բարձրագույն խմբի հանդիպումները սպասարկած մրցավարներն ու տեսուչները: Ընդ որում, ակումբների ներկայացուցիչները իրավունք չունեին լավագույն ֆուտբոլիստների եռյակում նշելու իրենց թիմի խաղացողի թեկնածությունը: Հարցման արդյունքներով հարցաթերթիկում առաջին տեղում նշված ֆուտբոլիստին տվել է 5 միավոր, երկրորդ տեղին՝ 3, երրորդին՝ 1:

Հարցման արդյունքներով 2004 թ. Հայաստանի լավագույն ֆուտբոլիստ է ճանաչվել Երեւանի «Փյունիկի» եւ ազգային հավաքականի հարձակվող Էդգար Մանուշարյանը: Հարցաթերթիկներում նրա ազգանունը 48 անգամ նշվել է 1-ինը, 13 անգամ՝ 2-րդը, 1 անգամ՝ 3-րդը: Արդյունքում Էդգար Մանուշարյանը վաստակել է 280 միավոր: Երկրորդը ճանաչվել է «Միկայի» եւ ազգային հավաքականի հարձակվող Արմեն Շահգելդյանը: Նրան ընդհանուր առմամբ ձայն են տվել հարցման 38 մասնակիցներ: 11 անգամ Շահգելդյանի ազգանունը նշվել է 1-ինը, 18 անգամ՝ 2-րդը, 9 անգամ՝ 3-րդը: «Միկայի» հարձակվողն ընդհանուր առմամբ վաստակել է 118 միավոր: Իր թիմակցից 23 միավորով է հետ մնացել լավագույն եռյակը եզրափակած, «Միկայի» եւ ազգային հավաքականի կիսապաշտպան Դավիթ Գրիգորյանը: Հարցաթերթիկներում նրա ազգանունը 5 անգամ նշվել է 1-ինը, 19 անգամ՝ 2-րդ, 13 անգամ՝ 3-րդը:

Չորրորդ եւ հինգերորդ տեղերը 40-ական միավորով բաժանել են «Փյունիկի» հարձակվող եւ առաջնության լավագույն ռմբարկուներից մեկը՝ Գալուստ Պետրոսյանը, եւ դարպասապահ Ադուլա Բեսեն: Նրանց հաջորդում են «Փյունիկի» պաշտպան Ալեքսանդր Թադեւոսյանը՝ 19 միավոր, Նշան Էրզրումյանը («Կիլիկիա»)՝ 9, Կառլ Լոմբեն («Փյունիկ»)՝ 7, Աղվան Մկրտչյանը («Փյունիկ»), Սամվել Մելքոնյանը («Բանանց»), Հովհաննես Թահմազյանը, Կարեն Նավոյանը («Արարատ»)՝ 5-ական, Արարատ Առաքելյանը («Բանանց»)՝ 4, Արարատ Հարությունյանը («Բանանց», «Շիրակ»), Մամադու Դիավարան, Կարեն Ալեքսանյանը (երկուսն էլ՝ «Փյունիկ»)՝ 3-ական, Վարդան Հովհաննիսյանը («Միկա»), Ռաֆայել Նազարյանը («Փյունիկ»), Արտյոմ Եվլանովը («Բանանց»)՝ 2-ական, Կարեն Սիմոնյանը, Հովհաննես Դեմիրճյանը (երկուսն էլ՝ «Բանանց»), Գոռ Միրզախանյանը («Կոտայք»), Վահե Թադեւոսյանը, Նենադ Ռադաջան (երկուսն էլ՝ «Արարատ»), Լեւոն Փաչաջյանը («Փյունիկ»)՝ 1-ական:

17-ամյա Էդգար Մանուշարյանը իրեն հիանալի դրսեւորեց ընթացիկ մրցաշրջանում՝ արդյունավետ խաղով աչի ընկնելով թե՛ պատանեկան հավաքականներում, թե՛ «Փյունիկում»: Նա 21 գնդակով Գալուստ Պետրոսյանի հետ ճանաչվեց առաջնության լավագույն ռմբարկու: Այս տարի Էդգարը իր նորամուտը նշեց նաեւ ազգային հավաքականում:

Մրցաշրջանն, անշուշտ, հաջող էր փորձառու Արմեն Շահգելդյանի համար: 31-ամյա ֆուտբոլիստը 1-ամյա ընդմիջումից հետո կրկին հանդես գալով Հայաստանի առաջնությունում, իրեն լավագույն կողմերով դրսեւորեց եւ կրկին հրավիրվեց ազգային հավաքական՝ բացելով հավաքականի գոլերի թիվն ընտրական մրցաշրջանում: «Միկայում» էլ Արմենը աչի ընկավ արդյունավետ եւ գրագետ խաղով՝ դառնալով 12 գոլի հեղինակ:

«Միկայի» երիտասարդ կիսապաշտպան Դավիթ Գրիգորյանի համար անկասկած ընթացիկ մրցաշրջանը նրա ֆուտբոլային կենսագրությունում լավագույնն է: Դավիթն էլ իր փորձառու թիմակցի նման «Միկայում» աչի ընկավ արդյունավետ խաղով՝ իր օգտին գրանցելով 11 գնդակ: Բնական է, որ նրա խաղը գրավեց հավաքականի մարզիչների ուշադրությունը եւ Գրիգորյանը բավական հաջող ելույթներ ունեցավ նաեւ ազգային հավաքականում:

«Ազգի» մարզական բաժնի կողմից շնորհավորում ենք մրցաշրջան-2004-ի դափնեկիրներին, որոնց պարգեւատրման հանդիսավոր արարողությունը տեղի կունենա վաղը: Հետաքրքրական է, որ լրատվամիջոցներից լավագույն եռյակը ճշտությամբ գուշակել են **«Ազգի»** եւ «Ֆուտբոլ ռեյտինգ» թղթակիցները: Գլխավոր մարզիչներից ճիշտ է գուշակել «Արարատի» մարզիչ Սեւադա Արզումանյանը, իսկ մրցավարներից՝ Սուրեն Կարապետյանը:

Հայաստանի լավագույն ֆուտբոլիստները

1992 թ.	Սարգիս Հովսեփյան	ՀՄԸՄ
1993 թ.	Արմեն Շահգելդյան	«Արարատ»
1994 թ.	Արսեն Ավետիսյան	ՀՄԸՄ
1995 թ.	Սարգիս Հովսեփյան	«Փյունիկ»
1996 թ.	Արթուր Պետրոսյան	«Շիրակ»
1997 թ.	Հարություն Վարդանյան	«Շիրակ»
1998 թ.	Արթուր Ոսկանյան	«Ցեմենտ»
1999 թ.	Հարություն Աբրահամյան	«Արարատ»
2000 թ.	Արթուր Պետրոսյան	«Շիրակ»
2001 թ.	Վարդան Մինասյան	«Փյունիկ»
2002 թ.	Արման Քարամյան	«Փյունիկ»
2003 թ.	Արա Հակոբյան	«Բանանց»
2004 թ.	Էդգար Մանուշարյան	«Փյունիկ»

«Պորտոն» Միջմայրցամաքային գավաթի վերջին դափնեկիր

Ճապոնիայի Յոկոհամա քաղաքում Միջմայրցամաքային գավաթը վիճարկեցին չեմպիոնների գավաթակիր պորտուգալական «Պորտոն» եւ Լիբերտադորեսի գավաթի հաղթող կոլումբիական «Օնսե Կալդասը»: Հարկ է նշել, որ դա պատվավոր մրցանակի վերջին խաղարկությունն էր, քանի որ հաջորդ մրցաշրջանից մրցաշարին փոխարինելու է աշխարհի թիմային առաջնությունն աշխարհամասերի 6 ուժեղագույն ակումբների մասնակցությամբ: Ինչպես եւ անցյալ տարի «Միլանի» ու «Բոկա Խունիորսի» մրցավեճում, այս անգամ էլ մրցանակի բախտը վճռեցին 11 մ հարվածաշարերը: Խաղի հիմնական եւ լրացուցիչ ժամանակում մրցակիցներին այդպես էլ չհաջողվեց գտնել դարպասի բանալին, թեեւ երկու թիմերն էլ գոլ խփելու լավ հնարավորություններ ունեին:

11 մ հարվածներն ավելի դիպուկ իրացրին «Պորտոյի» ֆուտբոլիստները (8–7), որոնք էլ 2-րդ անգամ նվաճեցին Միջմայրցամաքային գավաթը: Հիշեցնենք, որ առաջին անգամ պորտուգալացիները հաջողության էին հասել 1987 թ.՝ հաղթելով ուրուգվայական «Պենյարոլին»: Այսպիսով, Հարավային Ամերիկա-Եվրոպա յուրօրինակ մրցավեճի հաշիվը կրճատվեց՝ 22–21: 1960 թ. խաղարկվող Միջմայրցամաքային գավաթի 43 խաղարկություններում պատվավոր մրցանակին արժանացել են 11 երկրների 25 թիմեր: Բոլորից հաճախ՝ 9 անգամ հաջողությունն ուղեկցել է արգենտինական թիմերին: 7 անգամ գավաթակիր են դարձել իտալացիները, 6-ական անգամ հաղթող են ճանաչվել բրազիլական եւ ուրուգվայական ակումբները:

Թիմերից առավել հաճախ՝ 3-ական անգամ, գավաթակիր են դարձել Ուրուգվայի «Նասյոնալն» ու «Պենյարոլը», արգենտինական «Բոկա Խունիորսը», Մադրիդի «Ռեալն» ու իտալական «Միլանը»: «Ռեալը» մրցանակի առաջին տերն է: 2 տարի անընդմեջ Միջմայրցամաքային գավաթում հաղթող են ճանաչվել բրազիլական «Սանթոսը» (1962–63 թթ.), իտալական «Ինտերը» (1964–65 թթ.) եւ «Միլանը» (1989–90 թթ.), բրազիլական «Սան Պաուլուն» (1992–93 թթ.):

ԲՈՆՑՔԱՄԱՐՏ

Կլիչկոն պահպանեց չեմպիոնի տիտղոսը

Գերծանր քաշային ուկրաինացի բոքսամարտիկ Վիտալի Կլիչկոն պահպանեց բոքսամարտի համաշխարհային խորհրդի վարկածով աշխարհի չեմպիոնի տիտղոսը: Լաս Վեգասում անցկացված մենամարտում նա բրիտանացի Դենի Ուիլյամսին տեխնիկական նոկաուտով հաղթեց 8-րդ ռաունդում: Հանդիպման մրցավար Ջեյ Նեդը 8-րդ ռաունդի ավարտից 1 րոպե 36 վրկ. առաջ դադարեցրեց մենամարտը, երբ Ուիլյամսը 4-րդ անգամ հայտնվեց նոկդաունում: Մենամարտի ընթացքում Կլիչկոյի ուժգին հարվածներից հետո բրիտանացի բոքսամարտիկը նոկդաունի էր ենթարկվել նաեւ 1-ին, 3-րդ եւ 7-րդ ռաունդներում: Հարկ է նշել, որ Ուիլյամսը քաշային իր կարգում ամենածանր բոքսամարտիկն է (122,4 կգ): Կլիչկոն անձնական քաշով նրան զիջում էր 9 կգ-ով (113,2 կգ):

SI-PHOTOLURE

Այսպիսով, Վիտալի Կլիչկոն չեմպիոնի կոչումը նվաճելուց հետո առաջին անգամ պաշտպանեց իր տիտղոսը: Մրցակցին չեմպիոնն ինքն էր ընտրել 15 ուժեղագույն բոքսամարտիկներից: Նշենք, որ Մայք Թայսոնին հաղթելուց հետո Դենի Ուիլյամսը գերծանրքաշայինների վարկանիշային ցուցակում բավական բարձր տեղ էր զբաղեցնում, ուստի պատահական չէր Կլիչկոյի ընտրությունը:

Ուկրաինացի բոքսամարտիկը պրոֆեսիոնալ ռինգում իր 35-րդ հաղթանակը նշեց: Դրանցից 33-ը ձեռք է բերվել նոկաուտով: Կլիչկոն ընդամենը 2 անգամ է ռինգը թողել պարտված: Ուիլյամսի համար հերթական անհաջողությունը 4-րդն էր: Նա 32 հաղթանակ է տոնել, որից 27-ը՝ նոկաուտով:

Առայժմ հայտնի չէ, թե ով կլինի Կլիչկոյի հաջորդ մրցակիցը: Սակայն մենամարտի նախօրեին բոքսամարտի համաշխարհային ընկերակցության վարկածով գերծանր քաշային կարգում աշխարհի չեմպիոն Ջոն Ռուիզը բաց նամակով դիմել էր տարբեր վարկածների բոլոր չեմպիոններին, այդ թվում եւ Վիտալի Կլիչկոյին՝ առաջարկելով յուրօրինակ մրցաշար կազմակերպել բոլոր ուժեղագույնների մասնակցությամբ՝ որոշելու գերծանր քաշային կարգում իրոք ուժեղագույնին:

Մենամարտի ավարտից հետո երկու բոքսամարտիկներին էլ տեղափոխեցին Լաս Վեգասի հոսպիտալ: Դենի Ուիլյամսին գլխուղեղի հեւազոտության ենթարկեցին: Բժիշկների մեջ կասկած կար, որ Կլիչկոն կոտրել է ձեռքը: Սակայն հետազոտությամբ այդ վարկածը չհաստատվեց: Պարզապես ուժգին հարվածներից Կլիչկոն խիստ ցավեցրել էր ձեռքերը:

Աշխարհի նախկին չեմպիոն Լենոքս Լյուիսը մենամարտի մասին հետեւյալ կարծիքն է արտահայտել. «Դիտելով մենամարտը եւ տեսնելով, թե ինչ է կատարվում Ուիլյամսի հետ, նրա փոխարեն ռինգ դուրս գալու ցանկություն առաջացավ: Մրցակիցների վարժեցությունների տարբերությունը զգալի էր: Կլիչկոն այս մենամարտում առանձնապես ոչինչ չդրսեւորեց: Ինչպես երեւում է, ես կրկին պետք է ռինգ դուրս գամ, որպեսզի պատասխանեմ այն բոլոր հարցերին, որոնք անպատասխան են մնացել: Եթե Կլիչկոն իրոք արժանի չեմպիոն է, ապա նա Ուիլյամսին պետք է հաղթեր առաջին իսկ ռաունդում»:

«Ոսկե գնդակը» Անդրեյ Շեւչենկոյին

Եվրոպայի լավագույն ֆուտբոլիստի համար սահմանված «Ոսկե գնդակ» մրցանակը կհանձնվի Ուկրաինայի հավաքականի եւ Իտալիայի «Միլանի» հարձակվող Անդրեյ Շեւչենկոյին: Ավանդույթի համաձայն պատվավոր մրցանակի տերը որոշվում է հանրահայտ «Ֆրանս ֆուտբոլ» շաբաթաթերթի հարցման միջոցով: Ավելի մանրամասն հարցման արդյունքները կհրապարակենք մեր վաղվա համարում:

Պայքարի ահազանգը կեղծ էր

Իսպանիայի առաջնության 15-րդ տուրի «Ռեալ»-«Ռեալ Սոսյեդադ» հանդիպումը մնաց անավարտ: Խաղավարից 7 րոպե առաջ Մադրիդի «Սանտյագո Բեռնաբեու» մարզադաշտում հայտարարվեց շատ էվակուացիա: 70 հազար հանդիսականները խաղի մասնակիցների հետ 15 րոպեում շատ կարգով ազատեցին մարզադաշտը: Պատճառն այն էր, որ խաղի ընթացքում «Gara» թերթում ահազանգ էր սացվել մարզադաշտում տեղադրված ռումբի վերաբերյալ: Անհայտ անձը տեղեկացրել էր, որ տեղական ժամանակով ժամը 21-ին մարզադաշտը պայթեցվելու է: Բարեբախտաբար, ամեն ինչ բարեհաջող ավարտվեց: Պայթյուն այդպես էլ տեղի չունեցավ:

Ինչ վերաբերում է անավարտ հանդիպմանը, ապա կողմերի համաձայնությամբ որոշվել է հունվարի 5-ին առանց հանդիսականների շարունակել երկու թիմերի մրցավեճը, որը տեւելու է ընդամենը 7 րոպե: Ճիշտ է, այն ֆուտբոլասերները, որոնց մոտ պահպանվել են տոմսերը, կարող են ներկա գտնվել հանդիպմանը: Հանդիպումն անավարտ էր մնացել 1-1 հաշվի ժամանակ: 42-րդ րոպեին հաշիվը բացել էր բրազիլացի Ռոնալդոն, 73-րդ րոպեին Նիհասը վերականգնել էր հավասարակշռությունը:

Նակամուրան շահում է մրցախաղը

Մեխիկայում շախմատային յուրօրինակ մրցախաղ է անցկացվում աշխարհի ամենաերիտասարդ գրոսմայստեր, ուկրաինացի Սերգեյ Կարյակինի եւ ԱՄՆ-ի նորընծա չեմպիոն, ճապոնացի Հիկարու Նակամուրայի միջեւ: Մրցախաղը բաղկացած է 6 պարտիայից: Առաջին պարտիայում Նակամուրան հիանալի նվեր մատուցեց իրեն ծննդյան 17-ամյակի առթիվ եւ 41-րդ քայլում հաղթեց մրցակցին: Երկրորդ պարտիայում կրկին հաջողությունն ուղեկցեց ԱՄՆ-ի չեմպիոնին: Սեւերով սիցիլիական պաշտպանությունում Նակամուրան կարողացավ իրացնել իր առավելությունը: Երկու պարտություններից հետո Կարյակինը 3-րդ պարտիայում բավականին վստահ խաղաց եւ 39-րդ քայլում հասավ հաղթանակի: Այսպիսով, 3 տուրից հետո Նակամուրան 2-1 հաշվով շահում է մրցախաղը:

Էջը պատրաստեց ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի նիստում

Կենտրոնական բանկի խորհուրդը դեկտեմբերի 10-ի նիստում Կենտրոնական բանկի գործառնությունների տոկոսադրույքները թողեց անփոփոխ. կնքվող ռեպո-համաձայնագրերի տոկոսադրույքը՝ տարեկան 3,75, տրամադրվող լոմբարդային վարկերինը՝ 16, իսկ ներգրավվող ավանդներինը՝ 1 տոկոս:

***

ԿԲ մամուլի ծառայությունը հրապարակում է նոյեմբերի 12-25-ն ընկած ժամանակահատվածում ձեւավորված մակրոտնտեսական իրավիճակի եւ ֆինանսական շուկայի միտումների մասին.

Մակրոտնտեսական իրավիճակը Ըստ Ազգային վիճակագրական ծառայության պատեսոնական տվյալների, նոյեմբերի 10-20-ը գրանցվել է 0.9% գնաճ:

Նոյեմբերի 12-25-ն ընկած ժամանակահատվածում բյուջեի միջին օրական հարկային եկամուտները կազմել են մոտ 1 մլդ 19 մլն դրամ:

Դրամավարկային հաղորդակցություն Այդ ժամանակահատվածում փողի բազան նվազել է 4 մլդ 403 մլն դրամով՝ կազմելով 112 մլդ 975 մլն դրամ: Փողի բազայի նվազումն ուղեկցվել է ԶԱԱ-ի 1 մլդ 135 մլն դրամ աճով եւ ԶՆԱ-ի 5 մլդ 538 մլն դրամ նվազումով:

ԶԱԱ-ի աճը պայմանավորված է եղել ՀՀ ԿԲ կողմից արտարժույթի շուկայից 1 մլդ 508 մլն դրամին համարժեք արտարժույթի ձեռքբերմամբ: Վերջինիս զուգահեռ նվազել են այլ ակտիվները՝ 357 մլն դրամով, ինչպես նաեւ վճարվել է անդամակցության գումար՝ 16 մլն դրամ գումարի չափով:

ԶՆԱ-ի նվազումը պայմանավորված է եղել կառավարության պարտավորությունների նվազմամբ, որը կենտրոնական գանձապետարանի միասնական հաշվի մնացորդի 3 մլդ 585 մլն դրամ կուտակման, 1 մլդ 691 մլն դրամ կառավարության դեպոզիտների եւ ՀՀ ԿԲ արժեթղթերի պորտֆելի 689 մլն դրամ գումարի չափով աճի արդյունք է: Այս ընթացքում բանկերի պարտավորությունները նվազել են 1 մլդ 772 մլն դրամով՝ ի հաշիվ ռեպո գործառնության եւ արժութային սվոփի մարման, իսկ զուտ այլ ակտիվներն աճել են 824 մլն դրամով՝ դարձյալ հիմնականում ի հաշիվ արժութային սվոփի մարման:

Նոյեմբերի 19-ին նախորդած շաբաթվա ընթացքում փողի զանգվածն (առանց կուտակված տոկոսների) նվազել է 2 մլդ 52 մլն դրամով եւ կազմել 259 մլդ 262 մլն դրամ: Շրջառության մեջ եղած կանխիկը նվազել է 3 մլդ 739 մլն դրամով, իսկ ավանդներն աճել են 1 մլդ 688 մլն դրամով: Ցպահանջ արտարժութային ավանդներն աճել են 1 մլդ 47 մլն դրամով, իսկ ցպահանջ դրամային ավանդները՝ 328 մլն դրամով: Ժամկետային արտարժութային ավանդները նվազել են 245 մլն դրամով եւ կազմել 62 մլդ 529 մլն դրամ: Պայմանավորված վերադարձով՝ դրամային զանգվածը նվազել է 2 մլդ 806 մլն դրամով եւ նոյեմբերի 19-ին կազմել 127 մլդ 173 մլն դրամ:

Ֆինանսական շուկայի միտումները Հաշվետու ժամանակաշրջանում թղթակցային հաշիվների միջին մակարդակը կազմել է 22,002 մլն դրամ, իսկ պարտադիր պահուստավորումը՝ 16,615 մլն դրամ:

Նշված ժամանակահատվածում ներքին արժութային շուկայում, ՊՊ առաջնային եւ երկրորդային շուկաներում դիտվել են հետեւյալ միտումները:

Ներքին արժութային շուկա ԿԲ կողմից գնվել է մոտ 3 մլն 203 հազ. ԱՄՆ դոլար՝ 502.39 դրամ փոխարժեքով:

Միջբանկային շուկայում գործառնությունների համախառն ծավալը կազմել է 94 մլն ԱՄՆ դոլար, որից 48 մլն ԱՄՆ դոլարի առք եւ 46 մլն ԱՄՆ դոլարի վաճառք՝ համապատասխանաբար 501.27 եւ 503.13 դրամ միջին կշռված փոխարժեքներով:

Նշված ժամանակահատվածում արտարժույթի շուկայում ձեւավորված ՀՀ դրամի փոխարժեքը ԱՄՆ դոլարի նկատմամբ արժեւորվել է 0.47%-ով՝ 503.47 դրամից մեկ ԱՄՆ դոլարի դիմաց հասնելով մինչեւ 501.11 դրամի:

ՊՊ առաջնային շուկա Տեղի է ունեցել ՊՊ-երի 2 թողարկում, տեղաբաշխվել են 60-ամսյա եւ 5-շաբաթյա պարտատոմսեր՝ 3 մլդ դրամ ընդհանուր ծավալով: Առաջին շաբաթվա ընթացքում թողարկվել է 60-ամսյա պարտատոմս՝ 2 մլդ դրամ ծավալով, որի նկատմամբ պահանջարկը կազմել է 4 մլդ 607 մլն դրամ (230.33%)՝ արդյունքում ձեւավորելով 7.13% միջին կշռված եկամտաբերություն: Երկրորդ շաբաթվա ընթացքում տեղաբաշխվել է 5-շաբաթյա պարտատոմս՝ 1 մլդ դրամ ծավալով, որի նկատմամբ պահանջարկը կազմել է 1 մլդ 727 մլն դրամ (172.74%) եւ ձեւավորվել է 3.98% եկամտաբերություն:

ՊՊ երկրորդային շուկա Իրականացվել է 1 մլդ 655 մլն դրամի գործարք՝ 6.10% միջին կշռված եկամտաբերությամբ: Առաջին շաբաթվա ընթացքում իրականացվել է 1 մլդ 93 մլն դրամի գործարք՝ 6.42%-ով, երկրորդ շաբաթվա ընթացքում՝ 562 մլն դրամի գործարք՝ 5.48%-ով:

Միջբանկային ռեպո գործառնություններ Միջբանկային շուկայում իրականացված ռեպո գործառնությունների ծավալը կազմել է 5 մլդ 176 մլն դրամ՝ 4.03% միջին կշռված տոկոսադրույքով: Առաջին շաբաթվա ընթացքում իրականացվել է 3 մլդ 616 մլն դրամ ծավալով գործարք՝ 4.04%-ով, երկրորդ շաբաթվա ընթացքում՝ 1 մլդ 560 մլն դրամ ծավալով գործարք՝ 4.02%-ով:

Հաջորդ երկշաբաթյա ժամանակահատվածի ծրագրավորում Նոյեմբերի 26-ից դեկտեմբերի 9-ն ընկած ժամանակահատվածում փողի բազայի առավելագույն ցուցանիշը կկազմի 117 մլդ 573 մլն դրամ:

Ըստ ծրագրավորման, երկշաբաթում կիրականացվի արտաքին պարտքի տոկոսագումարի եւ անդամակցության գումարի վճարում՝ համապատասխանաբար 239 մլն եւ 319 մլն դրամ գումարների չափով, ինչպես նաեւ ՀՀ ԿԲ կողմից արտարժույթի շուկայից նվազագույնը 3 մլդ դրամին համարժեք արտարժույթի ձեռքբերում: Այլ ակտիվները կաճեն 468 մլն դրամով: Վերահիշյալ հոսքերը կհանգեցնեն ԶԱԱ-ի ցուցանիշի 2 մլդ 910 մլն դրամի աճին:

Կառավարության զուտ պարտավորությունների ցուցանիշը, ըստ ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարության բյուջետային հարցերի հանձնաժողովի տվյալների, կաճի 1 մլդ 156 մլն դրամով՝ պայմանավորված կենտրոնական գանձապետարանի միասնական հաշվի մնացորդի 1 մլդ 655 մլն դրամ գումարի ծախսմամբ, ինչպես նաեւ կառավարության դեպոզիտների 499 մլն դրամ գումարի չափով ավելացմամբ: Նախատեսվում է նվազագույնը 1 մլդ դրամի դրամային գործառնությունների իրականացում, որի արդյունքում բանկերի պարտավորությունները կաճեն 1 մլդ դրամով եւ կկազմեն 12 մլդ 700 մլն դրամ: 468 մլն դրամով կնվազեն զուտ այլ ակտիվները: Վերահիշյալ փոփոխությունները կհանգեցնեն ԶՆԱ-ի 1 մլդ 688 մլն դրամի աճին:

Այսպիսով, նկատի ունենալով ավտոնոմ հոսքերի գնահատականները, երկշաբաթյա ժամանակահատվածում ԿԲ-ն կիրականացնի մոտ 4 մլդ դրամի իրացվելիության ներարկում՝ փողի բազայի ցուցանիշը՝ 117,573 մլն դրամն ապահովելու նպատակով: Հաշվի առնելով վերահիշյալը, ինչպես նաեւ մակրոտնտեսական ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվությունը եւ ֆինանսական շուկաներում առկա միտումները՝ ԿԲ խորհուրդը որոշեց տոկոսադրույքները թողնել անփոփոխ՝ բանկերից ներգրավված ավանդների համար 1%, ռեպո համաձայնագրերի համար՝ 3.75%, լոմբարդային վարկերի համար՝ 16%:

ՀՀ ԿԲ մամուլի ծառայություն

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Այն մարդիկ, ովքեր մտածում են օտար երկիր գնալու մասին եւ կարիք ունեն իմանալու, թե ինչ է տպասվում իրենց օտար պետություններին «հանձնվելու», փախստականի կարգավիճակ հայցելու դեպքում կամ աշխատանք կատարելու ինչպիսի ռեալ պայմաններ եւ հեռանկարներ կան, ի վերջո ո՞րն է իրականությունը եւ որը միֆը, ապա կարող են այցելել ՀՀ կառավարությանն առընթեր **միգրացիայի եւ փախստականների** վարչություն, որի հասցեն է՝ Հր. Քոչարի 4, ինչպես նաեւ զանգահարել **224727** «թեժ գիծ» հեռախոսահամարով եւ հիշատակված հարցերի վերաբերյալ ստանալ բարձրորակ, սպառիչ եւ անվճար խորհրդատվություն:

Երեւանի գեղարվեստի պետական ակադեմիայի ամբողջ կոլեկտիվը խոր վիշտ է ապրում մեծ դերասանի՝ **Խորեն Աբրահամյանի** մահվան առթիվ:

Նրա ստեղծագործական տաղանդը խոր եւ անջնջելի հետք է թողել ընտրական հանդիսատեսի հոգում: Ցավակցում ենք հանգուցյալի հարազատներին ու բարեկամներին:

ԵՐԵՎԱՆԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ԱՐՄԵՆԻԱ ՏԵԼԵՖՈՆ ԿՈՄՊԱՆԻ
ARMENIA TELEPHONE COMPANY

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Արմենտելը հայտարարում է մրցույթ տեխնիկական տնօրինության Միջազգային համակարգերի բաժնի ռադիո էլեկտրոնիկայի ճարտարագետի թափուր աշխատատեղի համար:

Մրցույթին մասնակցել ցանկացողների համար անհրաժեշտ պայմաններն են՝

- Բարձրագույն մասնագիտական կրթություն
- Ավելի քան 3 տարվա աշխատանքային փորձ ռադիո-էլեկտրոնիկայի կամ հեռահաղորդակցության ոլորտում
- Հեռահաղորդակցության սարքավորումների սպասարկման փորձ
- Համակարգչային գիտելիքներ՝ Windows, MS Office, Internet, Unix
- Խափանումների հայտնաբերման եւ էլեկտրոնային սարքերի վերանորոգման կարողություն. տվյալների բազաների իմացություն եւ աշխատանք. Անգլերեն լեզվի գերազանց իմացություն

Մրցույթին մասնակցել ցանկացողների փաստաթղթերն անհրաժեշտ է մինչեւ դեկտեմբերի 20-ը ներկայացնել Արմենտելի կադրերի վարչություն՝ Երեւան, Սիսակյան 2

ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությունը ներկայացնում է տեղեկատվություն մասնավորեցման մասին

Մրցույթ

N	Անվանում	Հասցե	Գործունեության տեսակը	Գնահատված արժեքը (հազ. դրամ)	Նվազագույն գինը (հազ. դրամ)	Մրցույթի անցկացման օրը
1	«Գլխամասային կոմունտս» ՊՓԲԸ գույքի կազմից առանձնացված «Վաղարշապատ» հյուրանոց	Արմավիրի մարզ, ք.Էջմիածին, Կիրովի փող.	Հյուրանոցային ծառայություններ	56 852	10 000	05.01.2005թ.
2	Հրազդանի կինոցանցի «Հրազդան» կինոթատրոնի գույք	Կոտայքի մարզ, ք.Հրազդան, Սպանդարյան փող.	Ժամանցի կազմակերպում	3941	985	11.01.2005թ.
3	Հրազդանի կինոցանցի «Բարեկամություն» կինոթատրոնի գույք	Կոտայքի մարզ, ք.Հրազդան, Միկրոշրջան	Ժամանցի կազմակերպում	8484	2121	11.01.2005թ.
4	«Արմավիրի նավթամթերք» ՓԲԸ	Արմավիրի մարզ, ք.Արմավիր, Սայաթ-Նովա 1	Նավթամթերքի առեւտուր	143 625	35 906	14.01.2005թ.
5	«Ամասիայի գյուղատնտեսական ուսումնական բազա» ՊՓԲԸ	Շիրակի մարզ, գ.Ամասիա	Գյուղատնտ. ուսումնափորձնական աշխատանքների իրականացում	1088	272	14.01.2005թ.
6	«Ամասիայի հյուրանոց» ՊՓԲԸ	Շիրակի մարզ, գ.Ամասիա	Հյուրանոցային ծառայություններ	2658	665	14.01.2005թ.
7	«Դիլիջանի բեռնատարատար ավտոտրանսպորտային» ՓԲԸ	Տավուշի մարզ, ք. Դիլիջան, Գետափնյա 3	Բեռների և ուղևորների փոխադրում	86 796	43 398	25.01.2005թ.

Լուծարվող ընկերությունների գույքի աճուրդ (հոլանդական)

N	Անվանում	Հասցե	Գույքի տեսակը	Շենքերի մակերեսը (մ.մ.)	Աճուրդի անցկացման օրը
1	«Գյումրիի էլեկտրոն» ԴՁ-ի գույք	Շիրակի մարզ, ք. Գյումրի, Գորգարանային 5	Հիմնական միջոցներ - 37 անվանում	-	12.01.2005թ.

Աճուրդ

N	Անվանում	Հասցե	Գործունեության տեսակը (հազ. դրամ)	Գնահատված արժեքը (հազ. դրամ)	Մեկնարկային գինը	Աճուրդի անցկացման օրը
1	Ավտոմեքենա «Գազ-31029» պետ. 011OS01	-	-	1316,1	1052,88	17.12.2004թ.
2	Ավտոմեքենա «Գազ-3110» պետ. 100OS01	-	-	1364,7	1091,76	17.12.2004թ.

Ուղղակի վաճառք

N	Անվանում	Հասցե	Զբաղեցրած մակերեսը (մ/մ)	Գույքի մեկնարկային գինը (հազ. դրամ)	Պայմաններ	Հայտերի ընդունման վերջնաժամկետ
1	«Արմավիրի նավթամթերք» ՓԲԸ-ի N2 լցավորման կայան	Արմավիրի մարզ, գ. Մարգարա	139,7	544	Սահմանված են ՀՀ կառավարության 2004թ. հունիսի 10-ի N 1334-Ն որոշմամբ	Հրապարակումից մեկ ամսվա ընթացքում

Առավել մանրամասն տեղեկությունների համար տես՝ «Ազգ» օրաթերթի 02.11.04թ. N 194, 06.11.04թ. N 198, 13.11.04թ. N 203, 16.11.04թ. N 204, 20.11.04թ. N 208, 23.11.04թ. N 209, 04.12.04թ. N 218 07.12.04թ. N 219 և 11.12.04թ. N 223 համարները, կամ դիմել՝ «Աճուրդի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն՝ ք. Երևան, Հր. Քոչարի 27, հեռ. (+3741) 276594, ֆաքս՝ (+3741) 276594: էլ. փոստ: tender@privatization.am, URL: www.privatization.am:

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-24-83

«Գինդ» տպագրատուն, Երեւան, Բագրատունեաց 70ա Գրանցման թիւ՝ 65, դասիչ՝ 69150 Տպաքանակը՝ 3000 Ստորագրված է տպագրության՝ 13.12.2004 Գինը՝ 100 դրամ